

ՅՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴՈՒԹԵԾՆ ԵՒ Ն. ՆԱԽԻՋԵՒԾՆԻ ՀԻՄՆՐԿՈՒԹԻՒՆԸ

Նոր-Նախիջևանցիք իւրեանց հոգեսր առաջնորդ Մարկոսեան Պետրոս վարդապետի և Ռուսաց զօրավար «Ենարալ Պօստիկ» Ալէքսէլ Վասիլիչ Սուվորինի առաջնորդութեամբ 1778 թուականի Օգոստոսին դուրս գալով Ղոփմի Քաֆա, Բախչիսարայ, Ղարասու, Գեօղլեւ քաղաքներից և նոցա շըրջակալ գաւառներից, մտնում են Խուսաստանի նախկին Ազովի նահանգը և հասնում են Դօն զետի ափը, ալժմուալ իւրեանց բնակութեան տեղը միաև 1780 թուականի Յունուարի 14-ին¹⁾, Գաղթականների ալսքան երկար ժամանակ ճանապարհորդելու պատճառը, բացի ճանապարհի երկարությունից և բազմատեսակ դժուարութիւններից, որոնք առհասարակ տեղի են ունենում ամեն մի գաղթականութեան ժամանակ, լինում է ան, որ նոքա դուրս են գալիս իւրեանց նախկին բնակութեան տեղերից զեռ Ռուսաց տէրութիւնից խոստա-

¹⁾ «Յամի ծննդեան Տեսառն մերոկ և Փրկչին՝ 17-8, և Հալոց ՌՄՇ է թուին, և յամեանն Յօդուառուի, գրում է առ մասին Բովսէփի արքեպիսկոպոսը իւր ձեռագիր ՀՊ Հմարում, ի Ղոփմի երկրոջ եղեալ բոլոր Լուսաւորչական ազգն հալոց, հրամանաւ մեծ կալսերուհուն և ինքնակ լուհոն ամենալի ռուսաց Եկատար նէ ։ ինքսիովնին երկրորդի, ելին անտի ի չորս քաղաքաց, ալսինքն՝ ի կաֆալու, ի Բաղչիսար լու, ։ Արասուլու, ի Գօղլովու և ի շրջակալ դասարակից և գ ուս է ց նոցին մտ մեծի լաղմութեւն սուլթանին Յօմանց որոժամ զիսիմ արձակեալ ի լիշխանութենէ նորին, և առեալ իւս ն թաթարաց ինքնագլուխ արար զնաւ Բալց զ զ զ ն ք ուսունէից, հալոց և հոռոմոց, սեպհականիադ ուստաց Զուս և ձեռն զօրավարին և ռուսաց ենարալ պօսոմիկ Աւրու ։ Ա սիլիչ Սուվորովին հանեւ անտի՝ երեր ի երկիրս ռուսաց Մերալին ազգին առաջնորդ գորով լանփամ՝ պորսալեց ։ Աստրոս վարդապետ ոմնու և ի սմին թուոջ եկին ի գաւառ զովուց։

ցուած արտօնութիւնների հրովարտակը չստացած։ Նոքա դեռ մի որոշուած բնակութեան տեղ չունենալով, ստիպուած են լինում ամբողջ երկու տարի և չորս ամիս թափառել վրաններով կատարինասլաւի և նորա Սամար²⁾ կոչուած տեղի շրջակալքում և ենթարկուել ամեն տեսակ նեղութիւնների։ Նոցա ծեծում է անձրեց, տանջում է ցուրտը։ հալածում ու անհանգիստ են անում գողերը, աւազակները, նեղացնում են շոգը, ձիւնը և զանազան տեսակ վտանգաւոր և վարակիչ հիւանդութիւնները։ նոցա իջևանած տեղերում ամբողջ գերեզմանոցներ են դուռը, որովհետև շատերը նոցանից, նամանաւանդ երեխանները և ծերերը, չկարողանալով դիմանալ նեղութիւններին, մեռնում են ճանապարհին³⁾, Գաղթականների թիւը զգալի կերպով պակասում է, որովհետև, բացի բազմաթիւ մեռնողներից, շատերն էլ զղջալով իւրեանց դուրս եկածի վերալ և լիցելով իւրեանց թողած տուն ու տեղը, իւրեանց սուրբ եկեղեցիներն ու վանքերը, նորից փախչում, վերադառնում են Ղում։ Ճիշտ է, նոքա դեռ Ղումում հոգացել էին ձեռք բերել զաղթելու համար կալսերական հրովարտակ և դորա համար իւրեանց երեխներից ուղարկել էին Ծետերքուրդ երկու պատղամաւոր՝ փառակեցի իգնատիսոսի որդի մահտեսի Յարութիւնին և փառակեցի Տէր-Ռականի որդի պարոն կարապետին, բայց նոքա տեղական լիղուին և կարդ ու կանոնին անծանօթ լինելով, չէին կարողացել հասնել իւրեանց նպատակին և հրովարտակ ստանալու գործն ուշացել էր, նա-

²⁾ Սամար կոչուած տեղը Սամար դետի Ջրաբաշխն է, որ զաղթականները սկզբից խնդրել և որտեղ իշխանութեան հաւանութիւնն էին ստացել բնակութիւն հաստատելու։ Պ. Լէօն սիսալում է, երբ «Սամար» քաղաքի անուն կարծելով, ասում է. «Գաղթականները երկար ժամանակ մնացին առանց հաստատութեան օթևանի։ Նրանք ապրում էին վրանների մէջ Եկատերինոսլավ և Սամար քաղաքներում ու շրջականներում»։ Տես »Ցովսէփ կաթողիկոս Արլութեանս էջ. 55.

³⁾ Գաղթականների քայած նեղութիւնները հետևեալ կերպով է նկարագրում Ցովսէփ արքեպիսկոպոսն իւր ձեռագիր «Դաւթարում»։ «Յամ երկուս, վրանաւ պանդխտեցան ժողովուրդն սեր՝ ի Սամար և ի Կատարինէսլաւ և ի շրջակալս նոցին, և վեստեցան բազում մարդիկ պէս պէս նեղութեամբ, արևու և անձրեսու և ի գողմց, և բազումք ի կոկծանաց մեռան, քահանակք և ժողովուրդք, Առաւել ծերքն, լիշելով զննդետն տեղիս իւրեանց, զվանօրէլսն և զեկեղեցիսնու

մանաւանդ որ պատգամաւորներից մէկն էլ՝ Տէր-Ռսկանիշորդի Պարոն Կարապետը մեռել էր յալրաքաղաքում։ Գաղթականների միակ լուսն ու ապաւէնը մնացել էր նոցա հոգեսր առաջնորդ Պետրոս վարդապետը։ Նորա հետ էր Ռուսաց տէրութիւնը և սկզբանէ անտի բանագնացութիւն արել գաղթելու համար, նորա բերանով էր խոստացուել գաղթականներին գանաղան արտօնութիւններ. նա էր նոցա կրած նեղութիւնների մէջ միսիթարում նոցա, լուս տալիս, քաջալերում, նա էր նոցա ներկալացուցիչը. նորան էին դիմում նոքա իւրեանց բողոքներով, նորանից էին նոքա սպասում և իւրեանց ցաւերի. ճարն ու դարմանը, իւրեանց աստանդականութեան վախճանը. Սակայն գաղթականների կուր բաղակից ալդ վերջին լուսն էլ շատով կտրում է. Պետրոս վարդապետը 1779 թուականի Յունուարին մեռնում և թաղուում է Սամար կոչուած տեղում¹⁾։ Գաղթականները մնում են բոլորովին անտէր-անտիրական, խեղճ, աղքատացած և օտարների մէջ ցրուած։ Դրութիւնը լուսահատական էր, հանգամանքները վհատեցուցիչ։ Ալդ դժուար դրութեան մէջ թշուառ ժողովրդի աչքերը զառնում են դէպի ալդ ժամանակուալ Ռուսաստանի Հալոց առաջնորդ Յովսէփի արքեպիսկոպոս Երկանաբազուկ-Արզութեանը, որի մօտ նոքա դեռ Պետրոս վարդապետի կենդանութեան ժամանակ պատգամաւորութիւն էին ուղարկել և խընդուել, որ նա գործ դնէ իւր ազդեցութիւնը և նպաստէ հրովարտակը սուանալու գործին։ Յովսէփի գործունէութեան բարի համբաւը հասել էր նոցա ականջը դեռ նոցա Ղոկմում եղած ժամանակ։

Յովսէփի արքեպիսկոպոսը Հալաստանի Գուգարաց նահանգի Տաշրաց գաւառի Սանահին գիւղաքաղաքից էր. նա Հալոց Արղութեան-Երկանաբազուկ իշխանական մեծ տոհմից էր և ծնուել էր Ֆիֆլիզում 1734 թուին։ Նորա հօր անունն էր Շիօշքէկ, մօր անունը—Քէթեան։ Շիօշքէկը սպանուելով լեկիններից, թողել էր չորս արու զաւակ՝ Յովսէփի, Մովսէս, Փարսաղան և Քէժան, և երկու դուստր՝ Ռուսուղան և Մարիամ։ Մովսէսը և Փարսաղանը մեռել էին երիտասարդութեան հաստկում։

¹⁾ «Ի 1778 թուին փրկչի և ի լամսեանն լուսվարի, ասում է Յովսէփը իւր Շիաւթարում, վախճանեցաւ ի Սամար նոյն Առաջնորդ Պետրոս վտրդապետն և անդ թաղեցաւ»։

Արդութեան-Երկալնաբազուկներն իւրեանց «Արդութեան» աղջանունը սերած են համարում Արդութ անունով մեծ իշխանից, որ իւր Մոնղոլ-Թաթարներին մատուցած մեծ ծառալութիւնների համար 1287 թուին մեծ պատիւներ է վալել թաթարաց Արդուն խանից, իսկ «Երկալնաբազուկ» մականունը նոքա լառաջ եկած են համարում Պարսից Արտաշիր Լոնդոման կոչուած թագաւորից, որի ցեղը իրբւ իէ Պարսից տէրութիւնն Աղեքսանդր Մակեդոնացուց կործանուելուց լետոյ, տեղափոխուել է Հայաստան, ինքը Յովսէփ արքեպիսկոպոսն իւր համառօտ կենսագրութեան մէջ, որ նա զրել է Նախիջևանի Հոգեսոր Դատարանի կանոնադրութեան լառաջաբանում, ասելով, որ ինքեանք առաջ կոչում են եղել Երկալնաբազուկ, իսկ լետով Արդութեան, չէ լիշտում, թէ Բնչպէս են առաջ եկել ալդ ազգանունները, ալլ իւր ազգաբանութիւնը հանում է Սարգիս իշխանի որդի նշանաւոր Զաքարէ սպասալարից, որ, ինչպէս լաւուի է, իւր ժամանակին մեծ իշխանութիւն է ունեցել թէ Հալոց և թէ Վրացւոց վերալ. «Յիշեցէք, ասում է նա ալդ լառաջաբանում, զմարմնաւոր ծնողն իմ զնիօքէգն՝ զսպննեալն լանօրէն լէհեղեաց ի տարապարտուց, և զպարկեշտագնաց մալրն իմ Քէթեան, և զհանգուցեալ եղբարսն իմ զվաղաթառամ զխորհրդակորուս Սովոչս բէգն և զֆարսաղանն, և զկենդանի եղբարն իմ պարոն Բէժան բէգն, և զքորսն իմ Ռուսուդան և զՄարիամն և զամենալն զարմս և զաւակս նոցին. որք ի լեօթներորդ գաւառէն Հալոց ի նահանգէն Տաշրաց և Լուսու, զոր ալժմ վիրք ունին. և լիշխանանիստ գիւղաքաղաքէն Սանահնու, և լազգէ մեծ սպարապետին Հալոց և Վրաց՝ Զաքարիա իշխանին, որդու Արգոսի իշխանի, զորմէ պատմէ պատմին Կիրակոս Որք և ի հնումն կոչէաք Երկալնաբազուկ, իսկ ալժմ կոչիմք Արդութեանց»:

Յովսէփ իշխանն իւր մանկութեան տարիներն անցկացնելով իւր ծնողների տանը և ալնպիսի դաստիարակութիւնու կրթութիւն ստանալով, որ սովորաբար ստանում էին ալդ ժամանակուալ հալ մեծատունները, հակումն է զղում կրօնաւորութեան և զնում է Ս Էջմիածին. Ակդաեղ ալդ ժամանակ մեծ կեանք ու կինդանութիւն կար. Երջանկալիշատակ Սիմէօն կաթողիկոսի ազդեցութեան ներքոյ մեծ ճիգ էր թափուում բարձրացնելու հալը աթոռի ընկած նշանակութիւնը. Ամեն

կողմնը օրհնութեան կոնդակներ էին ուղարկում, աշխատանք էր լինում պաշտպանելու Աթոռի իրաւոնքները, նուիրակների ձեռքով քաջալերում էր ցրուած, վհատած ժողովուրդը և բարուքում էր վանքի քալքարուած նիւթական դրութիւնը. պատրաստութիւն էր տեսնուում վերաբանալու Փիլիպպոս Հաղբակեցու և Մովսէս Սիւնեցու ժամանակները հաստատուած բաց նոցա լաջորդների ժամանակ խափանուած «Ժառանգաւորաց զպրոցը» և Պօլսից Յակովը Նալեան պատրիարքի օրով հաստուտուած զպրոցից աւարտած ուսուցիչներ էին հրահրուում. թղթի զործարան էր շինուում և ջանք էր լինում տպարան բանալու և ամենաանհրաժեշտ գրքերի տպագրութեան ձեռնարկելու.

Երիտասարդ իշխանը մտնում է ժառանգաւորաց զպրոցը, որդեգրուում է, դառնում է գործունեալ կաթուղիկոսի սիրելի և ձեռնասուն աշակերտաներից մէկը և ձեռնադրուում է սարկաւագ. 1765 թուին նա աւարտելով իւր ուսման ընթացքը և կատարելագործուելով, ձեռնադրուում է վարդապետ. 1771 թուին օծում է եպիսկոպոս, խակ երկու տարուց լիտոյ, 1773-ին արքանանալով վեհափառից արքեպիսկոպոսութեան մեծ աստիճանին, նշանակուում է նորահաստատ Ռուսաստանի Հալոց թեմի առաջնորդ և ծալրագոյն նուիրակ.

Մենք Ռուսասաանի Հալոց թէմը կոչում ենք նորահաստատ ոչ թէ նորա համար, որ մինչև ալդ ժամանակ ալդ թէմը չկար, ալլ որովհետեւ մինչև ալդ ժամանակները Մալր-Աթոռի և Ռուսաց արքունիքի մէջ պաշտօնական լարաբերութիւն և թղթակցութիւն չէին սղել, կալսերական հրովարտակ չէր հրատարակուել, պաշտօնապէս Ռուսաստանում հալկական թէմ չէր կազմուել և նորա վերալ չէր ճանաչուել Ա. Էջմիածնի աթոռակաների իրաւոնքը. Զուղալեցի և ուրիշ տեղերի Հալերը վաճառականական զործերով բաւական հին ժամանակներից երթևեկելով Ռուսաստան, ԺԶ դարի վերջերից արդէն սկսել էին հաստատ բնակութիւն հաստատել Ռուսաց զանազան առետրական կենդրոններում. Հալերի թիւը նամանաւանդ շատացել էր ծէ զարի սկզբից, երբ սկսուել էին Ղարաբաղի Հալոց մէլիքների և Աղուանից կաթուղիկոսների քաղաքական լարաբերութիւնները և բանադնացութիւնները Ռուսաց արքունիքի հետ, հրատարակուել էին Հալերի վերաբերութեամբ Պետրոս Մեծի ողորմածութեան հրովարտակները և, Ռուսաց

դօրքի Պարսից Կասպից ծովի ափերում գտնուած գաւառները
բանելու պատճառով, խմբովին զաղթականութիւններ էին ե-
ղել զէպի Ռուսաստանի սահմանները. Գաղթականութեան ալք
հոսանքը շարունակուել էր և Պետրոս Մեծի լաջորդների ժա-
մանակ և հնագնետէ կազմուել էին Հայտարարանի, Ղզլարի,
Ս. Խաչ քաջաքի, Մողջոկի և մալրաքաջաքների հայ գաղութ-
ները, որոնց բոլորին Ռուսաց տէրութիւնը սիրով ընդունելով
առանձին հրովարակներով եկեղեցիներ և վանքեր լինելու,
իւրեանց ազգալին և կրօնական ծէսերը ազատ կերպով կատա-
րելու, ազատ կերպով վաճառականութիւն անելու և մինչև
անգամ իւրեանց օրէնքներով և սովորութիւններով դատարան
ունենալու իրաւոնք էր տուել. Ս. Էջմիածինը Ռուսաստանի
Հայերին ևս, ինչպէս և միւս երկրների գաղթական Հայերին
«Նուիրական վիճակ» համարելով, մինչև Երևանցի Սիմէօն
կաթողիկոսը կառավարել էր իւր նուիրակների ձեռքով, Ս.
Միւոնը բաշխելով, ձեռնադրութիւններ անելով և հօգալով
գաղթականների բոլոր կրօնական և եկեղեցական գործերը.
Սական Ղազար ջահկեցի կաթուղիկոսի ժամանակներից Ս-
Եջմիածնի և Ռուսաստանի Հայերի ալդ լարաքերութիւնները
սառել ու զաղարել էին. Դորա պատճառն եղել էր Ղազար
կաթուղիկոսի Բարսեղ նուիրակը, որ մի կոպիտ և խոռվարա-
գարքի տէր մարդ լինելով, գժոտութիւն էր ձգել զաղթական-
ների մէջ և անքան սառեցրել էր նոցա սիրտը. Ս. Էջմիած-
նից, որ նոքա թողնելով Մալր-Աթոռը, մտել էին Աղուանից
կաթուղիկոսի իրաւասութեան ներքո, ընդունել էին Աղուա-
նից կաթուղիկոսից ձեռնադրուած Վտեփաննոս եպիսկոպոսի
իշխանութիւնը և թագաւորական հրաման քերել տալով, 1749
թուին արգելել էին Ս. Էջմիածնի նուիրակների մուտքը Ռու-
սաստան. Ազդ արգելքը վերացնելու և Մալր-Աթոռի իրաւոնք-
ները Ռուսաստանի Հայերի վերա նորից հաստատելու համար,
երջանկալիշատակ Սիմէօն կաթուղիկոսը 1768 թուին մի պատ-
գամաւորութիւն էր ուղարկել նկատերինէ թ. Կալսերուհու
մօտ, որի վերա պարտականութիւն էր դրել պարզել հիւսի-
սալին դշխովի առաջ գործի հանգամանքները. Երջանկալիշա-
տակ կալսերուհին սիրով ընդունել էր կաթուղիկոսի պատգա-
մաւոր Դաւիթ եպիսկոպոսին և նորա ուղարկած սրբերի մա-
սունքները և նոլին թուին հրովարտակ էր հրատարակել, որովէ
ճանաչել էր Արարատեան Աթոռի իրաւասութիւնը Ռուսաս-

տանում ապրող բոլոր Հայերի վերակ և հրամակել էր նոցա
հնազանդել միախ Ս. Եջմիածնի կաթուղիկոսին ¹⁾. Ահա այդ

¹⁾ Դնում ենք ակստեղ Եկատերինէ Բ Կալերունէ 1781
թուականի Յունիսի 30-ին արձակած հրավարտակի պատճենը.
„Честайшему Патриарху Симеону и всъимъ прочимъ чест-
нымъ Юсь-Башамъ и управителямъ и всему честному Ар-
мянскому народу Наша Императорская милость и поздрав-
ление, объявляемъ чрезъ сю Нашу милостивую грамоту, что
пребывающей въ Великой Армении въ градѣ Вагаршапатѣ
Симеонъ патріархъ всего Армянского народа, чрезъ своего
нарочно присланного въ царствующій градѣ Москву Архи-
мандрита Давида, письменно настъ всенижайше просилъ, чтобъ
пожаловать Его патріарха Высочайшою Нашею Император-
ской грамотою, дабы оная содержима быть могла въ та-
можнемъ Престольномъ его храмѣ на вѣчную память ми-
лости и благоволенія Нашего; а какъ напредъ сего Высокіе
предки Наши, блаженныи и вѣчныи славы достойныи па-
мяти, Ихъ Величества Государь Императоръ Петръ Великій
и Государыня Императрица Екатерина Алексѣвна честный
Армянскій народъ, ради христіанства, въ особливой своеї
Императорской милости содержать благогизволили, о чемъ и
грамотами Ихъ Величествъ въ 1724 и 1726 годахъ къ тог-
дашнимъ Патріархамъ Исаю и Нестору, къ Юсь-Башамъ и
управителямъ и ко всему честному Армянскому народу от-
правленными засвидѣтельствовано, то и мы въ послѣдовanie
высокоупомянутымъ своимъ Предкамъ, равномѣрно соизво-
ляемъ, какъ настоящаго честайшаго Патріарха Симеона,
такъ и будущихъ Преемниковъ Его Патріаршаго престола,
такоже Юсь-Башей и управителей и весь честный Армян-
скій народъ въ Нашей Императорской милости и благово-
леніи содержать, такоже соизволлемъ Мы помянутаго Пат-
ріарха Симеона и Преемниковъ его Патріаршаго престола
обрѣтающихся въ Нашей Россійской Имперіи, Армянского
народа и закона людей по духовнымъ обстоятельствамъ и
церковнымъ обрязамъ имѣть въ своемъ вѣдомствѣ, какъ то
и прежде сего было, и для того, когда онне требовать бу-
дутъ, присылатъ къ нимъ Армянского Архіепископа, или
другаго сана изъ духовныхъ персонъ съ письменнымъ отъ
него патріарха свидѣтельствомъ, безъ котораго онне иначе
въ Нашей Имперіи приниманы не будууть; о чемъ отъ Насъ
пограничнымъ Нашимъ командирамъ и указы даны, впро-
чемъ Мы помянутаго честайшаго Патріарха Симеона и
честныхъ Юсь-Башей и управителей со всъимъ Армянскимъ
народомъ, а особливо въ Россійской Имперіи пребывающимъ,

Հրովարտակի հիման վերալ էր, որ կազմուել էր մի նոր կտնունաւոր եպիսկոպոսական թէմ, որին Մինաս արքեպիսկոպոսից լետու, ինչպէս վերն ասացինք, նշանակուել էր առաջնորդ և միանգամայն ծալրադուն նուիրակ Յովսէփ Երկարնաբազուկ Արղաւթեանը.

Համնելով իւր առաջնորդանիստ Հաշտարխան քաղաքը, Յովսէփը շուտով ծանօթանում է բոլոր գործերին և իր անշապատող հանգամանքներին, իւր նուրբ ու թափանցիկ խելքով, իւր խոհեմ ու հաճելի բնաւորութեամբ, իւր առատաձեռն ու քաղցր վարեցողութեամբ, ճարպիկ և հեռատես քաղաքականութեամբ և եռանդուն ու տենգալին գործունէութեամբ նա կարծ միջոցում ձեռք է բերում ահապին ազգեցութիւն իւր խնամքին լանձնուած ժողովրդի վերալ և զրաւում է ոչ միայն իւր ընդարձակ թեմի բոլոր նշանաւոր հոգեոր և աշխարհական իշխանաւորների սէրն ու համակրութիւնը, ալլ և մինչև անդամ իւր վերալ է դարձնում և Եկատերինէ կալսերուհու ուշադրութիւնը. Սակաւ չեն նպաստում առաջնորդի վարկի բարձրանալուն արքունիքում և արքեպիսկոպոսի մտերիմ բարեկամ նշանաւոր Պատեօմկինը, որ ինչպէս լայտնի է, ալդ ժամանակները մեծ զեր էր խաղում տէրութեան գործերում և կալսերուհու ամենահաճելի մարդն էր, և հալազզի ականաւոր Նաղար Նաղարեանի Յովհաննէս, Մինաս, Յովիակիմ որդիները, որոնք մեծ փառք ու պատիւ ունէին մալրաքաղաքներում և վակելում էին կալսրուհու բարեհանութիւնը.

Ալդ ժամանակները Ոուսաց քաղաքականութիւնը ալլ

обаждеваемъ Нашею Высочайшю Императорскою милостию и покровительствомъ; а притомъ даемъ знать, что присланыя къ намъ отъ Патріарха Симеона съ Архимандритомъ Давидомъ мощи Святаго Предтечи и Крестителя Господня, Святых Мученицы Рипсими и Святаго Великомученика Георгия, да часть Ковчега Ноева, съ особливымъ Нашимъ благоволенiemъ приняты, якоже и помянутый Архимандритъ Давидъ обратно отсюда къ Патріаршему престолу съ сею Нашею Императорскою грамотою отпущенъ, и можетъ пзустно обнадежить весь честный Армянскій народъ о Нашей къ нему Императорской милости и благо оленіи, съ коими Мы пребываемъ. Дано въ столичною Нашемъ царствующемъ градѣ Санктъ-Петер ургѣ за Нашею Государственою большою печатью, іюни 30 дня 1768 года».

էր. աշխատանք էր լինում հալերին Ռուսաց կողմը գրաւելու, դահաղան քաղաքական ծրագրներ էին կազմուում Հալաստանի վերաբերութեամբ, Վրաստանը պաշտպանելու, Հալերին մահմեղականների ձեռքից աղատելու պրոէկտոներ էին լօրինուում. Հալոց առաջնորդի և մեծամեծների կարծիքներին կարենորութիւն էր տրուում, նոցա դիտողութիւնները, իբրև Ռուսաստանի շահերին նպատակալարմար առաջարկութիւններ, ի կատար էին ածում: Թէև պատմութեան հաստատուն աղբիւրներից չէ ճշտուում այն կարծիքը, որ մինչև ցածմ տարածուած է մեր մէջ, որ իբրև թէ Ղոխմի գաղթականութեան պատճառը Յովսէփ Արդութեանը և Լազարեաններն են եղել բայց անհերքելի է այն, որ նոքա մատն են ունեցել ալդ գործում, համակրել են գաղթականութեան և իւրեանց խորհուրդներով զրդել ու ընթացք են տուել աւդ գործին: Լազարեանները և Յովսէփ արքեպիսկոպոսն աշխատել են ամեն տեսակ մահմեղականների ձեռքի տակ գտնուած հալերին համախմբել քրիստոնեալ Ռուսաստանին պատկանած երկրներում, ապահովութիւն տալ նոցա բարեթանամ ինքնակալների հովանաւորութեան ներքու. Առաջնորդի գաղթականութեան գործի ալդ համակրելուն պէտք է վերագրել այն սիրալիր ընդունելութիւնը, որ նա անում է գաղթականների իւր մօտ եկած պատգամաւորներին, նորան պէտք է վերագրել և այն մեծ աշխատանքը, որ նա գործ է դնում հրովարտակը ստանալու համար:

Գլուխ Բ

Գաղթականների ուղարկած պատգամաւորները՝ կապիտան պարոն Յովհաննէս Արքահամեանը, Փառակեցի Պետրոսի որդի պարոն Մկրտիչը, Մահտեսի Դանիէլը և միւսները պատահում են տուաջնորդին այն ժամանակ, երբ նա դուրս դալով Հաշտարխանից, ճանապարհ էր ընկել գնալու Մոսկուա: Պետերբուրգի Հալոց նորակառուց եկաղեցու շինութիւնն ալդ ժամանակ արդէն վերջացել էր. նա գնում էր օծելսւ: Պատգամաւորները ներկալանում են նորան, լալտնում են իւրեանց վիշտն ու ցաւերը և խնդրում են նորա աջակցութիւնը հրովարտակը շուտով ստանալու համար: Առաջնորդն ընդունում է նոցա գուրգուրալով, քաջալերում, սիրտ է տալիս և խոստանում է նոցա համար անել ամեն բան, ինչ որ

միայն իւր ձեռքից կգար. Նա նոցա իւր հետ առնելով, տանում է Մոսկովա, այստեղից էլ Պետերբուրգ. Այդ ժամանակից է իսկապէս սկսում Յովսէփի նախիջևանցւոց հովուելու գործը, որովհետև թէն զեռ պաշտօնապէս ոչ կաթուղիկոսից, ոչ էլ տէրութիւնից լանձնուած չէ լինում նորան գաղթական-ների հոգուը, բայց նոցա բոլոր զլիսաւոր գործերը՝ արքունիքի հետ գաղթականների վերաբերութեամբ քանագնացութիւններ անելը, խնդիրներ մատուցանելը և հրովարտակ ստանալը նաև կատարում, ինքը Յովսէփ արքեպիսկոպոսն իւր ձեռադիր «Իտաւթարում» խօսելով իւր Պետերբուրգ գնալու և պատգամաւորների ընդունելութեան մասին, շեշտելով ասում է, որ ալդ ժամանակից գաղթականներին հովուելու ու խնամելու դորձն ընկել է իւր վերայ «Թալսմ ամի, ասում է նա, մինչ մեք ի Հաշտարխանու ելեալ գնացաք ի Սովորվ, գնալ ի Սանկթ-Պետերբուխ վասն օծութեան զշքնաղաշէն եկեղեցւոն նորին, զոր կառուցեալ էին ծուղալու դաշտցի Եղիազարեանց Եղիա-զար Ազնիւ Ազալի որդիքն, Ազնիւ Ազալ Յովհաննէսն, Ազալ Մինասն, և Ազալ Յովհակիմն. անկաւ լուծ հովուութեան նոցին ի վերալ մեր Եկին առ մեղ և ի հասարակութենէ նոցին, անձինք երեսելիք. որք էին կապիտան պարոն Յովհաննէսն Աք-րահամեան, Փառակեցի Պետրոսի որդի և մեր գանձապետ և վէքիլ պարոն Մկրտիչն, մահտեսի Դանիէլն և ալլք. Եւ լառաջ քան զնոսա, ի Ղոկիմու երկու դէֆութաթ ևս էին առաքեալ Փառակեցի Խղնատիոսի որդի մահտեսի Յարութիւն, որ անդէն վախճանեցաւ ի Պետրպոլք և Փառակեցի Տէր Ռականի որդի պարոն Կարապետն»⁶⁾.

1779 թուականի նոյեմբերի 14-ին պատգամաւորների հետ միասին աղերսական խնդիր մատուցանելուց յետով, վերջապէս, առաջնորդը կարողանում է լաջողեցնել գործը, և Պտտեօմկինի ու Յովհաննէս ազալ Եղիազարեանի միջնորդու-

⁶⁾ Թէն Յովսէփ արքեպիսկոպոսն ասում է, թէ գաղթականների Ղոկիմոց Պետերբուրգ ուղարկած «դէֆութաթներից» մեռել է Փառակեցի Խղնատիոսի որդի մահտեսի Յարութիւնը, բայց ալդ ճիշտ չէ. մեռնողը եղել է միւս «դէֆութաթը» Փառակեցի Տէր-Ռականի որդի պարոն Կարապետը. Մինչև ցամօրդեռ Նախիջևանում ապրում են Կարապետի սերունդից ծեր մարդիկ, որոնք հաստատ կերպով ասում են, որ Պետերբուրգում մեռնող պատգամաւորն եղել է իւրեանց նախնին-առապետը.

թեամբ ստանում է ցանկալի հրովարտակը ¹⁾: Նա իսկոյն հրովարտակը լանձնում է պատգամաւորներին և ուղարկում է նոցա կատարինասլաւ և նորա գաւառը, պատուիրելով, որ շտապեն ժողովիլ դադթականներին և տանել նոցա հրովարտակում նշանակած տեղը, իսկ ինքը մնում է Պետերբուրգում աւարտելու ան գործը, որի համար եկել էր—օծելու նորակառուց եկեղեցին ²⁾: Պատգամաւորները շտապում են կատարել սրբազնի հրամանը. նոքա հասնում են գաղթականների ցրուած տեղերը և իմանալով Պետրոս վարդապետի մահուան մասին, ինքեանք են գործին զլուխ կանգնում: Նոքա հապճեպով ժողովում են գաղթականներին և տանում են նոցա դէպի Դօնի ափը: Չարչարուած, տանջուած ժողովուրդը տեսնելով պատգամաւորներին և նոցանից իմանալով հրովարտակի ստացուելու մասին, կարծես, մի առ ժամանակ մոռանում է իւր կրած նեղութիւնները, իւր աղքատութիւնը, անանկութիւնը. Նա խրախուսում է և մի վերջին անգամ էլ ճիդթափելով, հաւաքում է իւր ունիմչունիմը և հասնում է այն տեղը, որ կոչւում էր «Ռատառով սրբոն Դեմետրի» 1780 թուականի Յունուարի 14-ին ³⁾:

¹⁾ Յովսէփի և պատգամաւորների Պետերբուրգ գնալու և հրովարտակը ստանալու մասին «Դաւթարում» գրուած է. սգնացեալ մեր ի Սանկթ Պետերբուրխ, և գտեալ մեր զնորհս ի կալսերական մնծութենէն և ի պալատափալլ իշխան Գրիգոր Ալէքսանդրիչ Պատեմկինէն, որ էր Տեղակալ մեծ թագուհուն, և ինսամակալ ազգի մնրում, զաղերս մատուցաք վերոյ իշխանօքն ի ձեռն Ազնիւ Ազաւ Յովսէաննիսին Նղիսզարեանց, ըն. կալաք զկատարումն խնդրանաց մերոց՝ զամենասողորմածադադունեղ հրովարտակ և զյատուկ տեղ և բնակութիւն, զտեղին այն որ կոչեն ռաստով սրբոն Դիմետրի, որ է ի վերալ գետոյն տօնու, և անուանեցաք զքաղաքն մեր Նախիշնան:

²⁾ այ սմին ամի 1779 և ի նոյեմբերի 14: Զեռնարկեալ եղել հրովարտակն մեր ի կալսերական Մեծութենէն, զոր առեալ իշխանացն ալնոցիկ, դնացին ի հասարակութեան մեր ի կատաւինէսլաւ և ի գաւառս նորինա: («Դաւթար»):

³⁾ «Ի 1780 թուին փրկչի, հրովարտակն մեր և ամենալն ժողովուրդքն, եկին ի չնորհեցեալ տեղին, լունուարի Ճ-ի, Եւսկսան ալնունետ և զշինուածն շինել, և զիրաւարանն որ կոչի մագիստրաթ Հաստատեալո» («Դաւթար»): Կալսերական հրովարտակի մէջ զաղթականների բնակութեան համար նշանակուած տեղը ալսպէս է որշուած՝ սվասն լարմարագոյն բնա-

Գաղթականների բնակութեան համար նշանակուած տեղը
մի դաշտավալը էր, որ տարածւում էր Դօն գետի երկու ա-
փի վրայ. նորան արևելքից սահմանափակում էին «զազախ»
զինուորների հողերը, արևմուտքից՝ Դեմետրի ամրոցի սահ-
մանները, հիւսիսից՝ ընդարձակ դաշտը և հարավից՝ Դօնի
հովիտը. Դա մի անապատ տեղ էր, որ սկսուելով Դօնի ափե-
րից, դէպի հիւսիս բարձրանում էր, դէպի հարաւ ցածանում.
Ընդարձակ տափարակ տարածութեան վերալ ոչ մի չէնք, ոչ
մի թռով չէր երևում. ալտեղ նոցա հալրենիքի կեանքն ու կենդանութիւնը
չկար. Տաղտկացած և հիւսիթափուած աչքով են նալում դաղ-
թականներն իւրեանց ալդ նոր բնակութեան տեղի վերալ,
նոցա աչքը սովոր էր բարձրաբերձ սարեր, կանաչ դաշտեր,
անտառուտ հովիտներ և փրփրադէզ ալիքներ տեսնել, իսկ ալս-
տեղ միան հարթութիւն էր, տաղտկալի, միատեսակ հարթու-
թիւն, որ աւելի ևս տաղտկալի էր երեսում, որովհետեւ եղանա-
կը ձմեռ էր և չորս կողմը, մինչև անգամ ողանդաղահոսո Դօնը,
ևս, ծածկուած էր ձիւնի սպիտակ սաւանով.

Առ հասարակի Ռուսաստանի ալդ մասը ԺԼ դարի վերջե-
րում մի անշէն երկիր էր. բնակութիւնը սակաւ, քաղաքների
զիւղերի և աւանների թիւը շատ քիչ, ընդարձակ դաշտներն
ամայի, անմշակ. բնութիւնն էլ իւր կողմից, կարծես, նպաս-
տում էր երկրի ալդ անշէնութեան, ամակութեան. Հողը, որի ար-
տաքին շերտը կաւալին և աւազոտ էր, իսկ ներքինը-տեղ-
տեղ կալիճ, տեղ-տեղ հատաքար, կրաքար կամ աւազաքար,
թէն աջողութեամբ էր բացնում հացահատիկները, բայց ամե-
նեին չէր նպաստում ծառերի, թփերի անելուն, որովհետեւ
արգելք էր լինում ծառերի արմատներին խոր թափանցելու
գետնի մէջ և ամրանալու. Օդը խստաշունչ էր. թէն շատ ձիւն
չէր դալիս, բայց ցուրաը համառում էր 30 աստիճանի և լաճա-
խակի ըուբ էր անում, մրրիկ ու փոթորիկ էր բարձրանում.
Փեարուարի վերջնում և Մարտի սկզբներում վերջանում էր
ձմեռը և սկսում էր դարունը, ցուրտ, անախորժ, անձրեալին
քամոտ և ցեխոտ դարուն. ձիւները սկսում էին հալուել և կա-
ւիսառն հողը փափկելով համարեալ մինչև իւր տակի ամուր

կութեան ձերոյ ի գաւառին ազովոյ դատեալ ալլոց բնակչացն
տալ ձեղ ի շրջանակին ամրոցին որբոյն Դեմետրեալ ուսս-
տովսկունց....

շերտը, դառնում էր թանձր հեղուկ, ամեն կողմից մութ, պղտոր Ջրերը, առուակներ ու դետակներ կաղմելով, հոսում էին նեղ, երկան ձորակների միջով և կտրում էին ամեն տեսակ հաղորդակցութիւնն. Ամառը սկսում էր անակնկալ կերպով, միանգամից, անձրներին իսկուն լաջորդում էին տաքն ու խորշակը, որոնք շուտով չորացնում էին դաշտի սէզը և անապատալին բնաւորութիւն էր տալիս երկրին. երկիրը շատ տեղ ճագնդում էր, անտանելի փոշի էր բարձրանում, որ ծառերի և առանաւարակ բուսականութեան սակաւութեան պատճառով անտանելի էր անում բնակլիչների կեանքը:

Ահա հարաւալին Ռուսաստանի ալդ ամալի, անշէն անկիւններից մէկն էր գաղթականներին տուած աեղը, նոքա պէտք է մշակէլին նորան, չէնցնէին. պէտք է չէնք ու շինութիւններ ձգէին, քաղաք ու գիւղեր շինէին ալնաեղ, որտեղ մինչեւ ալդ ժամանակ միախն խաչնարածներն և վրանաբնակներն էին թափառել, որտեղ ձկնորսներն էին իւրեանց խղճուկ տաղաւարները կանգնեցրել. նոքա պէտք է թթենու պարտէզներ տնկէին ախտեղ, որտեղ միախն եղէգն, փուշն ու տատասկն էին բնում: որտեղ մինչեւ ալդ ժամանակ միախն բորէաը և խորչակն էին փչում:

Գաղթականները տեսնելով, որ ձմեռուալ պատճառով անկարելի է շինութիւնների ձեռնարկել, որոշում են սպասել դարնան, ուստի և նոցա մի մասը տեղաւորում է զաղախների գիւղերում, միւս մասը ծեմերնիկ գետի վերալ գոնուած Պօլուգենկա կոչուած աւանում, իսկ երրորդ մասը բնակում է ուղղակի բաց դաշտում վրանների տակ Դժուար, շատ դժուար է անցնում նոցա համար ալդ երեք-չորս ամիսը. աղանդաւոր զաղախները թշնամաբար են նալում նորեկների վերակ և ոչ միախն չեն օգնում նոցա, ալլ և ամեն տեսակ աշխատում են վնասել. ձիւնը, ցուրտը, քամին սաստիկ նեղում են. վառել քի դժուարութիւն կար, որովհետեւ արդտեղի միակ վառելիքը և զէգն ու քակորն էր, դոցա պատրաստութիւնն էլ առասարակ ձմեռուակ սկզբից էր տեսնւում: Բայց ժողովուրդը չէ վհա տում. նա լի լաւերով սպասում է գարնան, սպասում է տէրութեան խոստացած օժանդակութեան և սրբազնի օգնութեան:

Մինչ դաղթականներն ալսպիսի ցաւով ու դառնութեամբ են անցկացնում առաջին օրերն իւրեանց նոր բնակութեան

տեղում, Պետերբուրգում մեծածախ և շքեղ հանդէսներ են կատարում. Յօվաչփ արքեպիսկոպոսը Փետրուարի 18-ին մեծ հանդիսով օծում է մալրաքաղաքի Հայոց նորաշէն եկեղեցին լանուն ս. Կատարինէ կուսին. Եկեղեցու օծման հանդիսին ներկաէ են գտնում արքունիքի համարեա բոլոր նշանաւոր պալատականները, նախարարները և մեծամեծները. Սրբազնան ալդ առթիւ քարոզ է խօսում և դրուատում թէ եկեղեցին շինող լազարեաններին և թէ կալսերուհի Եկատերինէին, որ ալնքան հովանաւորութիւն էր ցոյց տալիս Հայերին, Քարոզը նախապէս թարգմանուած է լինում ռուսերէն և քաժանուած հանդիսականներին, որ նոքա հասկանան նորա իմաստը. Մի օրինակ էլ ալդ թարգմանութիւնից լատով պատրաստուած է լինում կալսերուհու համար, որ Պատեօմկինի ձեռքով մատուցում է նորան. Նա էլ հաճութեամբ ընդունելով, շնորհում է արքեպիսկոպոսին թանկագին քարերով զարդարած պնակէ և պարանոցի խաչ¹⁰⁾, Եկեղեցին լանուն ս. Կատարինէ կուսին օծելը մի երախտագիտութեան զգացմունքի արտալատութիւն էր, որ Լազարեանները և առաջնորդը, իբրև հայ ժողովրդի Ներկալացուցիչներ, ցոյց տուին Եկատերինէ կալսերուհուն ալն բոլոր բարիքների համար, որ նա մինչեւ ալդ ժամանակները արել էր Հայերի համար և ապագալում ես խոստանում էր անելու.

Ալդ փառաւոր հանդէսներից լետոլ, առաջնորդը պատրաստում է գնալ զաղթականների մօտ հոգալու նոցա քաղաքի հիմնարկութեան, շինութեան և կառավարութեան գործե-

¹⁰⁾ «Ի սմին թուղ և ի Փետրվարի ԾԼ լաւուր երեքշաբ. թի օծաք մեծաւ հանդիսիւ Սանկթ Պետերբուրխու եկեղեցին լանուն սուրբ կուսին Կատարինէի եկին ամենալն նախարաքն և լոլդ հաւանեցան ամենան արարողութեանց մերս սուրբ եկեղեցու և բազում գալթակութիւնք բարձան. Ի նոյն աւուր ասացաք զքարոզ Հայերէն. զոր լառաջագոլն թարգմանեալ էին ի բարբառ ոստաց և տպեալ, որ ի ժամ ասութեան քարոզին, բաժանեցին անդիշեալ իշխանացն. և զմինն զոր գեղեցիկ կազմալ էաք, ետուք վերոյ քնեազ Պօտեմկինին տալ կամսերուհոյն՝ զոր լատուկ շնորհիւ իւրով ընկալեալ զփոխարէնն ի ձեռն պայծառ ափալ քնիսալ Դրիգոր Ալէքսան. դրովիչ Պօտեմկինին շնորհեալ էր մեզ զպնակէ և զիսալ պարանոցի. զարդարեալ ակամբ պատուականօք. լոլտ մեծագինու» («Դաւթար»)։

րը, որովհետև արդէն թէ մարմնաւոր և թէ հոգեսր իշխանութեան կողմից նորան էր լանձնուել գաղթականներին հովուելը։ Ազդ մասին արդէն կալսերական հրովարտակ էր հրատարակուել և Պատեօմիկինի ձեռքով հրաման էր արձակուել Ազովի նահանգի նահանգապետ Զերյանովին, որ նորեկ Հայերը ևս, ինչպէս և Ռուսաստանի բոլոր Հայերը, պէտք է ենթարկուեն Արդութեանի առաջնորդութեան իրաւասութեան¹¹⁾։ Մտացուել էր և երջանկալիշատակ Սիմէօն կաթողիկոսի կոնդակը¹²⁾, որով նա պատուիրում և լորդորում էր իւր սիրասուն աշակերտին երթալ գաղթականների բնակութեան տեղը և ստանձնել նոցա խնամելու գործը։ Դորա հետ միասին հոգատար կաթողիկոսը կոնդակ էր ուղարկել և գաղթականներին և միսիթարել, քաջալերել և լուս էր տուել իւր հեռու ընկած և թշուառացած հոտի մի մասին, լայտնելով միանգաման և այն տառապանքների մասին, որոնց արդ ժամանակ

¹¹⁾ «Ուսմին թուող և ի մարտի 10. Պալծառափալլ իշխանն Դրիգոր Ալէքսանդրովիչ Պատեմկինն, հրամանաւ կալսերական մեծութեան առևտաց, զիեաց վասն Առաջնորդութեան մերով բոլոր երկրիս ռուստաց ազգին հարց, առ Ազովու գաւառապետ Վասիլ Ալէքսէիչ Զերյանովին» («Դաւթար»)։

¹²⁾ «Ուսմին թուող Մեծ կաթողիկոսն ամենակն հարց Սիմէօն և ծալրագորն պատրիարքն լուսանկար մօրն մերով սուրբ Աթոռուն էջմիածնի, և լասուկ ծնողն իմ 'ի Քրիստոս զիր լորդորանաց զրէր մեղ, ելանել և զնալ առ տարագրեալ ազգն մեր և միսիթարել զնոսաւ Աւ. զրէր նոցա միսիթարութիւն մեծ։ Ի սմին թուող և ի լուլիսի 19. ի տօնի վարդավառին, հանգեալ էր ի Քրիստոս քրտնաշան մշակն և մեծ վաստակաւորն եկեղեցւոն Քրիստոսի սուրբ հալրապետն Սիմէօն, ծնողն իմ հոգեսր և սույդ մեծ թողեալ ի վերալ բոլոր եկեղեցւոն և աղպին հարցուց, ևս ի սմին թուող և ի լոգոսուսի 8, ընտրեալ և օծեալ էին ի կաթողիկոսութիւն, զկարնեցի Ղուկաս սրբազն Արք Սպիտիկոսուն համեստաբարուու Յնուին թուղթ օրհնութեան սուրբ հալրապետին հանգուցելու և նորապսակի անդրանիկ օրհնութիւնն, լոթ անազան հասին մեջ, և կոկիծ մեծ ունեցան հասարակ ժողովուրդքն ի վերալ մահուան երջանիկ Հալրապետին, բայց ի լետին շունչն իւր, զկետին օրհնութիւն իւր և շնորհաւորութիւն նորող քաղաքիս և հնգեքին զիւղօքէիցն գրեալ էր, հանդերձ պէսպէս խրատիւք և օրինակօք, Ընդ նմին և զկիրս Հալրապետ աշխարհին, որք ի լարշաւմանէ զօրացն վրաց կրեալ էին և համարեալ թէ՝ մեծ մասն երկրին գերեալք» («Դաւթար»)։

ենթարկուել էր Հայաստանը և Մալր-Աթոռը թշնամիների լարձակմունքից:

17Ճ թուականի Մալիսի 9-ին Յովսէփ արքեպիսկոպոսը Յովհաննէս աղայ Լազարեանի հետ ներկալանում է «Ձարսկի Սելօլ» ամարանոցում կալսերունուն և թագաժառանդին. նաշնորհակալութիւն է մատուցանում իւրեան չնորհուծ պարզեների համար և մնաս բարեաւի հրաժեշտ տալով, պատրաստութիւն է տեսնում շուտով ճանապարհ ընկելու դէպի Նախիջան՝¹³⁾:

Սակալն նա ի նկատի առնելով, որ դեռ ևս մի քանի ժամանակ կարող է ուշանալ, իւր Պետերբուրգից դուրս գալուց առաջ մի թուղթ է գրում նախիջնանցոց և կապիտան պարոն Խաչերեսի ձեռքով ուղարկում է նոցա: Ալդ թուղթը, որ մի կոնդակածե գրութիւն է, պարունակում է իւր մէջ տեղեկութիւններ նորա մալրաքաղաքում ալդքան ուշանալու, կալսերունուն ներկալանալու և կատարած գործերի մասին և մի քանի կարգադրութիւններ գաղթականների մասին: Նա Պետերբուրգում իւր ալդքան երկար մնալը մեկնում է նորանով, որ կալսերուէին մալրաքաղաքում չէ և ինքը չնակելով իւր ջերմ ցանկութեան շուտով գտնուել գաղթականների մէջ, ստիպուած է սպասել, նամանաւանդ որ Հալոց խնամակալ Պահառափախալլ իշխանը ևս խորհուրդ է տալիս սպասել, ասելով, թէ առաւել բարի լինելոց է քեզ, Նա ալդ միջոցում կարողացել է իւր մի քանի մանր խնդիրները գաղթականների մասին կատարել տալ. Նա խօսք է առել Պահառափախալլ իշխանից, որ նախիջնանցոց շնորհած հողին կից գտնուած տեղը մօտ ապագալում նոցա տրուի, իրաւունք է ստացել, որ հանգուցեալ Պետրոս վարդապետին լարքունուստ շնորհած խաչն ընծալուի նախիջնանցոց և պահուի նորաշէն քաղաքի եկեղեցիներից մէկում իբրև լաւիտենական լիշտատակ Նորին կալ.

¹³⁾ «Ի սմին թուոջս և ի մալիսի 9, գնացաք առ մած կալսերուէին ի Յարսկի Սելօլ և արժանաւորեցաք համբուրել զձեռն և խօսել ընդ նմա, Աղնիւ Աղալ Յովհաննիսին, Եւ ի լունիսի 14. առ ժառանգն նորին, մեծ իշխան Պաւլ Պետրովիչն գնացաք, որք սիրով ընկալան զմեղ և խօսեցան ի սմին թուոջ և ի նոյեմբերի 14 մտաք մեք ի նորաշէն քաղաքս Նախիջնան մնաւ հանդիսիւ, զոր արկեալ են ի կազէթ աղգն ուռատաց, բոլոր հանդէսն եկեղեցական, զոր լաւաջ մեր բերին» («Դաւթամբար»).

սերական մեծութեան ողորմածութեան, Ազովի նահանգապետի անունով երկու «օրդր» է ձեռք բերել — մէկը, որ ինքն իւր մօտ է պահել անձամբ լանձնելու սգուբէ ունաթինո, հոգնոր գործերի մասին է, իսկ միւսը, որ ինքն առանձին գրութեամբ կապիտան Խաչերեսի ձեռքով ուղարկում է, գաղթականների մարմանոր գործերի մասին է, նա Թոխաթցի Տէր Յովհաննէսին և հանգուցեալ Պետրոսի որդի պարոն Մկրտչին կարգում է իրան տեղապահ, վէքի կամ գործակալ և պատուիրում է նոցա, որ նոցա ծերունի Սիմէտն աստուածիմաստ վարդապետի հետ միասին «սիրով և հեղութեամբ» կառավարեն ժողովուրդը մինչև իւր գալը և վալելեն այն բոլոր հոգենոր իրաւունքները, ուրոնք իւրեան են պատկանում. ժողովրդին էլ հրամակում է հնազանդ լինել նորան, ինչպէս իրան և, բացի «հաստրակին» և իշխանների իրաւասութեան պատկանած գործերից, ոչ մի հոգեր գործի ձեռնամուխ չլինեն. Նա պարտականութիւն է դնում գործակալների վերալ մի հաշուեգիրք պահելու և նորա մէջ ուրսին ուրուն նշանակել Ս. Ա.թոռի և առաջնորդի օգտին եղած բոլոր նուէլները, պարտականութիւն է դնում նոցա վերալ նունպէս քահանաների միաբանութեան համար բնակարան պատրաստել, որ նոցա միմանցից հեռու չընակեն, իւր համար էլ հրամակում է մի թեթե տուն առնել, որ գալուն պէս տեղ ունենալ իջնանելու և ալլն¹⁴⁾.

¹⁴⁾ Դնում ենք ալստեղ առաջնորդի նախիջնանցւոց ուղղած ալդ առաջին թուղթը՝ «Սրբութուուն էջմիածնի, ծալրագոյն նուիրակ և ըստուստաց երկրի եղեալ բոլոր Հալոց ազդին Առաջնորդ նուիրակ Յովսէփ, Արքեպիսկոպոս. Յորսէ ժամանեսցի ողջուն և օրհնութիւն ի վերալ սիրելի և կարօտեալ որդւոց մերոց, որք զետեղեալ կալք 'ի տիրապահ նոր քաղաքդ Նախիջնան. Վարդապետաց, քահանանակց, երից փոխաց, իշխանաց և առհասարակ ժողովրդեանդ ամենից իննդալ 'ի Քրիստոս Յիսուս 'ի լուսն բնաւից միշտ և հանապազ. Ասէն. Եւ ընդ Աստուածային օրհնութեանս ծանուցումն լիցի կարօտեալ և սիրելի վշտակիր ժողովրդեանդ մերոլ, զի թէպէտ ցանկամ տեսութեան ձերու որպէս ի մեռելոց լարուցելոյ, և լալտ իսկ է ինձ ներկալական հարկաւորութիւն իմ լինել ի միջի ձերում, սակայն իղձն և փափագն իմ ի ներկալումն ոչ առնու կատարումն, վասն զի՝ որպէս և լուեալ էք կախերուէին. Մեծ. Խւրախովքն գնաց լալլ ուրեք, և մեր խնամակալ պահառափակը քնեազն հրամալեց մեղ մնալ մինչև լեռ դառնալն մեծ թագունոյ, խոստանալով թէ՝ առաւել բարի է լինելոց քեզ. Եւ

Գլուխ. Գ.

Գաղթականներն օգտուելով գարնան և ամառուաշ
եղանակներից, ալդ միջոցում արդէն ժողովուել էին քաղաքի
և գիւղերի շինութեան համար նշանակուած տեղերում և ձեռ-
նարկել էին շինութեան. Քաղաքին լատկացուել էր, ինչպէս
հրովարտակում նշանակուած էր, Նախիջեան անունը, իսկ
գիւղերին, որոնց թիւը վեց էր,—այն անունները, որ կրում
էին նոցա գիւղերը Ղարմում Սալա, Սուլթան-Սալա, Նիսուլթալ,
Զալթը և Թոփտի. Վեցերորդ գիւղը, որի բնակիչների թիւը

ի լունիսի 24-ին, գալոց են աստ, վասն որո՞յ սոյն լուսովս
սպասեալ մնամք: Ի ներկալումս ևս՝ քանի մի խնդիրս արա-
րաք վասն ձեր, բոլորն կատարեաց և որդր գրեաց գուրէո-
նաթին. մինն առ մեզ մնաց, որ հարկաւոր և հաւատոր բան է
և մեք պարտիմք զալն ընդ մեզ բերել և տալ իւրն, իսկ միւսն
ահա ընդ մեր սիրելի որդի կապիտան պարոն Խաչերեսին ա-
ռաքեցաք առ ինքն զրով մերով: Խնդրեալ էաք ի պալմառա-
փալլ քննազէն, որ այն խաչն որ մեծ կալսերուհին լուսաւո-
րեալ հոգի Պետրոս վարդապետին էր չնորհեալ, տացէ մեզ, որ
մնասէ ի իւկեղեցին Նախիջեն անու քաղաքիդ, լաւիտենական
լիշտակ կալսերական ողորմութեան: Ահա օրդր զրեաց գու-
րէունաթին որ տալ մեզ, և մեք զրեցաք իւրն, տալ մեր որ-
դի կապիտան պարոն Խաչերեսին, բերել և լանձնել ի մէջ
իշխանացդ և հասարակ ժողովրոցդ գործակալացն մերոց,
Թօխաթիք տէր Յովհաննէսին և հանգուցեալ Պետրոսի որդի
պարոն Մկրտչչն, զորս և կարգեմք ի մէջ ձեր՝ ինձ տեղա-
պահ և վէքիլ ընդ ծերունի Սիմէսոն ածիմաստ վարդապետին,
որ մինչեւ ցդալն իմ առ ձնզ, ամենանի նոգեոր բանի որ մեզ
պատկանի, սոքա լինիցին կառավարիչք և կատարող և առանց
սոցա, քահանաւոք և աշխարհականք մի խառնեսցին ի բանս
ինչ, բաց լախմանէ, որ հասարակին և իշխանացն պատկանին,
սիրով ընդունողքն դոցին մեզ են ընդունողք և հնաշանդք:
Եւ նորոգ գործակալացդ մերոց պատուիրեմ, զի հեղութեամբ
և սիրով լինիջիք կառավարիչք գործոցն ձերոց, մեզ պատ-
կանելոց. քահանաւոցդ և իշխանացդ և հասարակ ժողովրդեա-
նոց պատուիրեմ սիրով ընկալնուլ զդոսա և պատուել ըստ ար-
ժանւոն: Եւ գործակալը ի մէջ ձեր զէֆթար պահեսջիք և
զոր ինչ ըստ բերման ժամանակիս նուէրք ինչ լինիցի սրբու
Աթոռուն և Առաջնորդիցն, ի նմա դրեսջիք ուրոյն ուրոյն:
Եւ միաբանիցն պատշաճաւոր տեղ և բնակութիւն շինեսջիք
որ ի միասին լինիցին. և վասն մեր ևս մէկ թեթէ տուն առ-
ջիք, մինչեւ մեք եկեսցուք, լուսամ Աստուած, որ ամենան
ինչ բարի լինիցի: Ով ոք զալ լալդէ լալդէ ուուսաց, առաջի

շատ սակաւ էր, առանձին գիւղ չէր կազմել, ալլ մնացել էր քաղաքի հետ միասին, պահևով իր իրաւունքներն իրան չնորհած հողի վերաբ Գաղթականները մեծ սիրով և ոգնորութեամբ են քնդուում իւրեանց խնամակալին. բոլոր ժողովուրդը եկեղեցականների և մեծամեծների հետ միասին ընդ առաջ է դուրս գալիս և մեծ պատուով ու լարգանքով առաջնորդում է նորան գէպի քաղաքը, որ դեռ բոլորովին անշնչն էր և միան ալտեղ ու այնտեղ բնակութեան ժամանակաւոր տնակներ և խրճիթներ էին երևում. Առաջնորդը տեսնելով ժողովրդի ալդ ոգնորութիւնը, ուրախանում է. նու աշխատում է ամեն տեսակ ալդ ոգնորութիւնը վառ պահնել նորա մէջ, խրախուսում և միսիթարում է նորան և ճիգ է թափում կարճ մ.ջոցում մռացնել տալ նորան գաղթելու ժամանակ քաշած նեղութիւնները, տանջանքները. Նա ինքը սկսում է աշխատել և իւր անձի եռանգուն գործունէութեամբ կենդանի օրինակ է լինում ժողովրդի համար իսկ աշխատելու, զործելու, շինելու համար մեծ ասպարէզ կար. Ճողովուրդը զբաղաւած էր իւր կեանքի առօրեալ լարմարութիւնը կարդաւորելու զործով—բնակարաններ էին շինում, ուտելիքի և վառելիքի պաշար էին ժողովում, խանութներ և արհեստանոցներ հաստատելու պատրաստութիւն էին տեսնում: Ցոլոր հոգեսր և եկեղեցական գործերը, պիտուքները, քաղաքի. և գիւղերի կառավարութեան բոլոր գործը ծանրանում էր առաջնորդի վերաբ. նա պէտք է եկեղեցիներ շինէր, զարդարէր նոցա. և եկեղեցական կարգ ու կանոններ սահմանէր, նա կրօնական պահանջներին բաւականութիւն

քննեազին գովեն զձեզ, և քննեազն մեծ խնամք ունի ի վերաբ ձեր: Զեր կցեալ տեղուու լաղազաւ ևս խնդրեցի, խոստացաւ որ ըստ ժամանակին տալոց է մեզ: Մինչդեռ աստ եմք, եթէ թեթև խնդրի ինչ ունիք, շտառով խնդրուցէք: Եւ եթէ լատուկ մարդ իցէք առաքելոց, խաչն ևս ընդ նմա առաքեսջիք, եթէ ոչ՝ մնասցէ: Կնիքն պատրաստ է որպէս և պարոն Խաչերեսն ասելոց է ձեզ, միան թագուհին պարաի տեսանել և ապատալ մեզ, լուսամ որ ընդ մեզ բերցուք: Մալիսի Յին գնացաք առ մեծ թագուհին շնորհիւ մեր քննեազին. և լուծ ողորմածարար ընկալաւ զմեզ, որպէս պատմելոց է ձեզ պարոն Խաչերեսն: Թէպէտ լամենամք փոքր ինչ, սակայն իմ իւտանալն, բոլորն է ի օդուտ ձեզ և քաղաքիդ ձերոր: Ողջ երուք շնորհիւ Տեառն մերոր Յիսուսի Քրիստոսի: Ա. Հ. Յ. Դ. Գրեցաւ ի 1780 ամին, և ի մալիսի 14: և Սանկէ-Պետերբուրդու:

տալու համար, բացի եկեղեցիներից, և մի վանք պէտք է շինէր. նա պէտք է հրովարտակում լիուած Սագիստրատը հաստատէր, Հալոց զատաստանի կարդ ու կանոնը դնէր. նա պէտք է հոգենոր գործերը կառավարելու համար, Հոգենոր Դատարան բանար և հասարակութեան տնտեսական քայլալուած դրութիւնը բարւոքելու հոգենոր հոգար և, վերջապէս, նա պէտք է ժողովրդի կրթութեան գործի վերալ մտածէր, դպրոցներ, ուսումնարաններ հաստատէր.

Նա իւր գալու առաջին ամիսները զբազուելով ընթացիկ, առօրեալ մանր, բայց անհրաժեշտ գործերով, իւր զլիսաւոր գործունէութիւնը սկսում է 1781 թուին Ապրիլին. Նա, նախ, զատկի տօնին, որ ալդ տարին պատահել է Ապրիլ 14-ին, ժողովրդին անմիտթար չթողնելու համար, մի փոքրիկ փայտեալ եկեղեցի է շինուած և օծելով նորան լանուն Ամենաօրհնեալ Ս. Կուսին, կոչում է նորան սիմոնրակատար Ս. Աստուածածին», որովհետեւ ինչպէս որ քաղաքը կոչուած էր Հալաստանի առաջին քաղաքի անունով, այնպէս էլ նա ցանկանում էր, որ նորա մէջ շինուած առաջին եկեղեցին ևս կոչուի Հալոց Եղեսչալում շինած առաջին եկեղեցու անունով Յետու նուն Ապրիլի 21-ին նա պատարագ է մատուցանուած ալդ նորաշէն եկեղեցում, քաղաքի հիմնարկութեան համար չորս քար է օծում չորս Աւետարանիչների անունով և նոյն օրը մեռունաթափ անելով, բոլոր հոգենոր դասի հետ, շրջապատուած քաղաքացի և գիւղացի ժողովրդի բազմութեամբ, շըրջում է քաղաքի չորս կողմը, օծած քարերը հաստատում է քաղաքի չորս անկիւններում, խաչով, աւետարանով և սրբոց մասունքներով անդաստան է անում, օրհնում է ջուրը, երկիրը, բնակիչները. Քաղաքի հիմնարկութեան հանդէսն ալդպէսի շքեղութեամբ կատարելը երկու նպատակով է լինում» մէկ «որ դորանով Յովսէփ արքեպիսկոպոսը կամենում է քաղաքը պաշտօնապէս հիմնարկուած և հաստատուած հրատակել, երկրորդ, շքեղ եկեղեցական հանդէսներով նա կամենում է միսիթարել ժողովրդին, մոռացնել տալ նորա անցրած տիսուրօրերը. «Եղա, ասում է նա ալդ մասին իւր ձեռագիր «Դաւթարում», ի միսիթարութիւն բազում, ամենայն սրտից տարակուսելոց, և մեք ալսու գեղեցիկ արարողութեամբ, կամեցաքմուացուցաննել ի մտաց սոցին զեգիպատական սոխն և զսխտորն.

որպէս երբեմն Մովսէս իսրայէլացւոցն ի ամինո¹⁵⁾, Ալնուհե-
տե նա քաղաքի կառավարութեան գործն իւր ձեռքն է առ-
նում, անձամբ սկսում է հսկել քաղաքի և գիւղերի շինութեան
վերալ և հաստատում է Մագիստրատը և Հոգեոր դատարանը.
Նա քաղաքի շինութեան համար ընտրելով Դօնի աջ, բարձր
ափը, հրամալում է նորա լատկագիծը քառակուսի ձեռվ կազ-
մել, Ալդ քառակուսի հրապարակի միջից ձգտելով երկարու-
թեամբ և լախութեամբ լախն և ուղիղ փողոցներ, նա հրա-
մալում է տները կանոնաւոր կերպով շինել փողոցների եր-
կարութեամբ, սկսելով արևմուտքից Դօնի ափի ճիշտ արևոե-
զից, որտեղ ալժմ գտնւում է ս. Նիկողալոս եկեղեցին, Նա նա-
խօքան նշանակում է կառուցանելք եկեղեցիների տեղերը և
հետզետէ հիմնարկում է նոցա, օծելով, նախ, ս. Նիկողալոս
և ս. Համբարձումն եկեղեցիների հիմքի քարերը, լեռով ս. Աս-
տուածածին, ս. Լուսաւորիչ ս. Թորոս և ս. Դէորդ եկեղեցի-
ներինը. Ղոխիմից բերած խաչքարերը նա հրամալում է եկե-
ղեցիների պատերի մէջ զնել. Եկեղեցիների ալդ անունները
նա առնում է Քաֆալի, Գեօղեւի, Բաղչիսարալի և Ղոխիմի
միւս եկեղեցիներից, որովհետեւ կամենում է, որ գաղթական-
ները միշտ լիշեն իւրեանց նախկին սրբութիւնները, որոնց
վիշտառակը մնացել էր նոցա մտքում հաւանականաբար դեռ

¹⁵⁾ Շի 1781 թուին և լամաեանն լապրիլի. ի Նախիջեան
քաղաքոյն նախապէս փալտեալ՝ եկեղեցի մի շինեցաք. և ի
զատկին, որ էր տօն սուրբ լարութեան Գրիստոսի և լապրիլի
14, օծաք զնա լանուն ամէնօրհնեալ սուրբ Աստուածածին
և անուանեցաք զնա, խնդրակատար սուրբ Աստուածածին.
Զի նախկին եկեղեցին աշխարհի, որ կառուցաւ ի լեղեսեալ,
ալսինքն՝ ի լուրհալ՝ ի Թաղէսսէ Առաքելով, էր լանուն սուրբ
Աստուածածին, ի սոյն թուոչս և ի լապրիլի իԱ, մատու-
ցաք ի սմին եկեղեցւոյ պատարագ, և օծաք զչորեսին հիմանց
քարինսն քաղաքիս, լանուն չորից սրբոց Աւետարանչացն, և
ի նմին օր մեռոնթափ արարաք, և մնծափափառ հանդիսիւ և
ամենալն ժողովրդովք զգեստառեալք ամենտն եկեղեցական
պատրաստութեամբ, շրջապատեալ զբոլոր քաղաքաւն, եղաք
զհիմունս քաղաքիս և չորս կողմունս սորին՝ լորդարաւիս ար-
տառաօք և բերկրալից ցնծութեամբ, և թափորիս անդաստան
արարեալ օրհնեցաք զնող և զջուր բնակութեանս մերով, խա-
չիւք, Աւետարանօք և սրբոց մասամբք, որք գոյին ի ձեռու
քոլոր վարդապետացն և քահանապից» («Դաւթարում»):

Հալաստանից: Ս. Լուսաւորիչ եկեղեցին առաջնորդը հիմնարկում է քաղաքի միջավարի մեծ հրապարակում, որի չորս կողմը քաղաքացիք արդէն սկսել էին խանութներ շինել. նաև կարգադրում է, որ ապագալում ալդ եկեղեցու գաւթում առաջնորդան շինուի և առաջնորդն ալյատել նստի:

Նրբոր եկեղեցիների շինութիւնը վերջանում է, նաև հետզհետէ օծում է նոցա և եկեղեցական սպասաւորներ և պաշտօնեաներ նշանակելով, հրամալում է այնուհետև կանոնաւոր կերպով ժամասացութիւն կատարել. Խոկ որպէս զի կարողանալ զարդարել եկեղեցիները հարկաւոր սպասներով, և պատկերներով, գորգերով, կապերտներով և եկեղեցական զգեստներով, նաև բերել է տալիս իւր մօտ Ղոկիմի եկեղեցիներից բերած իրեղէնները, որ մինչև ալդ ժամանակները մնում էին այն մարդկանց մօտ, որոնք նոցա բերել էին. Առաջնորդի առաջ բերում են Կաֆալի երաշխաւոր Ս. Աստուածածին վանքի, Ս. Սարգիս, Ս. Ստեփաննոս, Ս. Յովհաննէս, Ս. Քառասունք, ա. Աստուածածին, ա. Օգսենտ, ա. Յակովը, ա. Նիկողալոս, Ս. Հրեշտակապետ, Ս. Գէորգ, Ս. Խաչ, Ս. Համբարձումն, Ս. Յարութիւն, Ս. Թորոս և Ս. Լուսաւորիչ եկեղեցիների, Քաղջամարական Ս. Եկեղեցու, Աղ-Մեշիդի եկեղեցիների, Բամանի Ս. Աստուածածին, Ղարասուի Ս. Փրկչի, Հին-Ղոկիմի Ս. Փրկիչ և Ս. Խաչ վանքերի, Գեօղեկի Ս. Նիկողալոս եկեղեցու և Քալուխուի Ս. Յովհաննիսի իրեղէնները. Նա կոչում է քաղաքի իշխաններին և նոցա առաջ բանալով արկղները, որոնցից մէկը կնքուած էր հանգուցեալ Սիմէօն վարդապետի կնքով, իսկ միւսը հանգուցեալ Պետրոս վարդապետի, ցուցակազրում է մի առ մի բօլորը. Իրեղէնները կազմուած են լինում եկեղական պղնձեղէն և արծաթեղէն անօթներից, սրբոց պատկերներից, գորգերից, կապերտներից, կոտրտած արծաթեղէններից, զգեստներից և ձեռագիր ու տպագրուած մատեաններից. Նա ալդ իրեղէններից ընտրում է նորերը և նոցանից, մի մասը լատկացնում է քաղաքի և գիւղերի նորաշէն եկեղեցիներին, միւս մասն ուղարկում է Մողդոկի, Ղզլարի և Մոսկուալի եկեղեցիներին, երրորդ մասն էլ Կարապետ վարդապետի ձեռքով նորից ուղարկում է Ղոկիմի եկեղեցիներին, որովհետև նոքա գաղթականների դուրս դալուց լետով, բոլորովին առանց սպասների էին մնացել. Հին շապիկները, գորգերը, կապերտները «քիլիմները» նաև բաժանում է աղքատներին և.

Հքաւորներին, որոնք ցրտից անպատճար լինելով, հիւանդանում ու մեռնում էին. կոտրած արծաթեղինը նա ծախում է և ստացուած փողը գործ է դնում եկեղեցիների պակասութիւնները լրացնելու. իսկ ինչ որ վերաբերում է՝ գրչագիր մատեաններին,—նա նոցա խնամքով ժողովում է միասին, ցուցակագրում է և հրամալում է պահել առանձին արկղների մէջ, իբրև թանկագին լիշտակարաններ, Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցում, որտեղ պահում էին և վանքին լատկացրած իրեղէնները մինչև նորա շինութեան աւարտելը. Եւ այս բոլոր կարգադրութիւնները նա անում է իշխանների համաձայնութեամբ և խորհրդով, որպէս զի ապագալում ոչ ոք իրաւոնք չունենալ ասել, թէ առաջնորդն եկեղեցական իրեղէնները վատնել է կամ իրան է սեփականացրել.

Ղումի եկեղեցիներից հաւաքած և նախիջևան բերան իրեղէնների քանակութիւնը, ինչպէս երեսում է, աւելի շատ է լինում, քան թէ ստանում է առաջնորդը, բայց և ալնպէս նորա ստացածն էլ այնքան շատ է լինում, որ, բացի նորանից, որ նոցանովլ հոգացում է բոլոր նորաշէն եկեղեցիների ամենակարենոր պէտքերը, հարկաւորութիւնները, ալլ և աւելորդ էլ է մնում. Ահա ալդ աւելորդից է լինում, որ նա ընծալ է ուղարկում իւր թեմի ուրիշ հայարնակ քաղաքների եկեղեցիներին, ալդ աւելորդից է լինում և ալն հինգ արկղներեղէնները, որ նա կնքելով, դնում է Մագիստրատի պահարանը և պահում ապագալի համար. Պահեստի դրուած արկղները երկար, շատ երկար ժամանակ մնում են պահուած Մագիստրատում. Վերջապէս, Մանուկ Ալաջալեանի քաղաքալիխութեան օրով վաթսնական թուականներին Մագիստրատի կառավարութեան ցանկութեամբ նոքա տեղափոխում են Ս. Լուսաւորիչ պահարանը. Ուղարկելուց առաջ արկղները բաց են անում Հոգենոր կտուավարութեան անդամ Խոջեան Տէր-Պողոս քահանալի ներկալութեամբ, որպէս զի իմանան, թէ իսկապէս որքան և Բնչ իրեղէններ են նոցա մէջ պահուած, և տեսնում են, որ արկղներից մէկն իսպառ դատարկ է, մէկը կոտրտած արծաթեղինը է լցուած, երեքն եկեղեցական անգործադրելի, բայց բաւականին հին և ճարտարարուեստ ձեռքով շինուած անօթեղին է պարօւնակում, թէ ինչպէս էր պատահել, որ արկղներից մէկը բոլորովին դատարկուել էր, — ալդ ոչ ոք չէ կարողանում բացատրել. երկար ժամանակի մի-

ջոց էր անցել, բազմաթիւ քաղաքագլուխներ, դատաւորներ և կառավարիչներ էին փոխուելու մը մէկին կարելի էր պատասխանատու համարել, Բայց որ արկղները բացուած էին և նոցա միջից իրեղէնները հանուած,—ալդ անկասկած էր, որովհետեւ անկարելի է կարծել, որ Ցովսէփ արքեպիսկոպոսը դատարկ արկղը փակէրյն դնէր Մագիստրատ պահելու։ Ս. Լուսաւորչում արկղները պահուում են մինչև 1868 թ., երբ երջանկալիշատակ Գէորգ Գ կաթողիկոսն ալցելում է Նախիջևանը, Նախիջևանը, Նախիջևանը, որ շատ հին, նոյն իսկ Ցովսէփ արքեպիսկոպոսի ժամանակներից իրեղէններ կան պահուած եկեղեցում, պահանջում է իւր մօտ բերել նոյս, և տեսնելով, որ արժէք ունեցող հոռորդիւններ են, հրամալում է ուղարկել Ս. Էջմիածին թանգարանի համար¹⁰⁾, իսկ կոտրտած արծաթեղէնը դեռ Ալվաղեան վարդապետն իւր Նախիջևանի և Բեսսարաբիոյ առաջնորդ եղած ժամանակի հրամալել էր ալն ժա-

¹⁰⁾ Մագիստրատում պահուած իրեղէնների համառ.օտ պատմութիւնը մենք զտնում ենք Հոգևոր կառավարութեան 1866 թուի Հոկտեմբերի 3-ին Նոյիինանի քաղաքագլուխ Սաղաթի էլ Քալալեանցին ուղղած թղթի մէջ, «Փ հին ժամանակաց հետէ, դրուած է ալդ թղթում, ի քրաղաքօլի քաղաքական դումին քաղաքիս պահպանէին հինգ արկեղք, զորս ի ժումանակի քաղաքագլուխ Մանուկ աղալի Ալաջալեանց ի ներկայութեան անդամոց կառավարութեանս, Պօղոս քահանալի Խոշնանց, բացեալ զտեալ էին լերիս լայնոցիկ արկեղաց զեկեղեցական անօթս ի միում անգործածելի արծաթս, իսկ զհինցերորդ արկղն բոլորովին դատարկ, զորս և հանեալ լայնմ ժամանակի ի Տումէն, տարեալ էին վասն պահպանութեան ի Ո. Լուսաւորիչ Աւագ Եկեղեցին քաղաքիս, Բայց ապա ըստ կարգաւորութեան Նախիջևան տեղակալի առաջնորդութեան վիճակիս Գարդիէլ վարդապետի Ալվաղեանց ալնոքիկ անգործածելի արծաթք ի միում պարկի հանձնեալ էին քաղաքագլուխու, Սիմէօն աղալի Ալաջալեանց լաղացս ի գործ ածելու զալնս վասն եկեղեցական անօթաց, բայց նա չկարացեալ ի կատար ածել զիանձնաբարութիւն նախիջևանին տեղակալ վարդապետին, լանձնեալ է զալնս իւրմէ կողմանէ նախիջևան քաղաքագլուխու Կարապետ աղալի Հայրապետեանց, Կարգաւորեցին, Զվերողրելոց ամինից լայտնելով ձերոյին լարգուապատութեան խոնարհարար խնդրել զի զերոյիշեալ պարկն հանդերձ զտանեցեալ ի նմին անգործածելի արծաթուլք, առաջնունջիք ի հոգևոր կառավարութիւնս, զի սա գրեսց զալնոսիկ ի տոմարին լանձնելու նորին բարձր սրբազնութենէ կառավարչէ թեմիս ի Տէր Սղիազար Արքեպիսկոպոսէ ի շարս զարդուց և անօթոց եկեղեցեաց»։

մանակուալ քաղաքազլուխ Սիմաւօն աղալ Ալաջալեանին գործ գնել մար եկեղեցու զարդարանքի համար, բայց նա ալդ պատուէրը չէր կատարել և տուել էր նախկին քաղաքազլուխ կարապետ Հայրապետեանին, որ նորից հրամանի էր տանել Սաքիստրատ, և լետոյ, ըստ պահանջման Հոգմոր կառավարութեան, լանձնել էր նորան:

Գլուխ Դ.

Եկեղեցիների շինութեան հետ միասին բաւականին լաջող և արագ կերպով առաջ է գնում և քաղաքի շինութեան գործը, մրան ժամանակի ընթացքում շինութեան լատակագիծը իւր սկզբնական ձեռվ չէ մնում, ալլ մի փոքր փոփոխութեան է ենթարկում: Գաղաքը, փոխանակ բոլորովին քառակուսի ձև ընդունելու, սկսում է աւելի երկարել արևելքից դէպի արևմուտք, Դորա պատճառը լինում է այն հանգամանքը, որ զետափում արդէն շինուած տները շուտով քանդում և տարում են ուրիշ տեղեր, իսկ շինուելիք բնակարաններն ալլ ևս այնտեղ չեն շինում, ալլ քաղաքի միւս կողմերում: Մեզ ալդ հանգամանքի պատճառները ճիշտ, գրաւոր աղքիւրներից լալտնի չեն: Ալժմ քաղաքի ծերունիներն երկու տեսակ են պատճում: Ոմանք ասում են, թէ Ղակմի հովասուն և մաքուր օդին սովոր հալերը չեն կարողանում դիմանալ գետեղրեալ խոնաւ և ճահճոտ օդին և լաճախակի տենդ ու ջերմ են ստանում, հիւանդանում ու մահանում:

Պէտք է առհասարակ նկատել, որ Դոն գետն ամեն տարի գարնանը դուրս է գալիս ափերից և ծածկում է այն հարթ և ցած տարածութիւնը, որ գտնում է ուղղի Նախիջնանի դիմաց դէմ: Գետի լճացած ու ծովացած ջրերն ամբողջ երկու-երեք ամիս ծածկելով գետինը, կազմում են եղչդնուաներ, որ ամառուալ տօթերից նեխուելով, ապականում են օդը, լցնելով շրջակալքը անդիւ, անհամար մոծակներով, մծեխներով, և լնասակար գոլորշիքով: Ոմանք էլ ասում են, որ ալդ հանգամանքն առաջ է եկել ոչ թէ ճահճներից, ալլ այն բազմաթիւ աւազակութիւններից, լափշակութիւններից և սպանութիւններից, որոնք առաջին անգամները տեղի են ունեցել նորաշէն քաղաքի հէնց գետափնեալ մասում: Ճահճների աղքեցութիւնը, ասում են դոքա, տարածում է ոչ թէ միայն գե-

տեղրեալ տեղերի վրալ, ալ և մօտակալ բոլոր փողոցների վերալ ևս, ուրեմն եթէ ալդ պատճառով բնակիչները տեղափոխուելու լինէին, պէտք է տեղափոխուէին ոչ միայն գետափնեալ բնակիչները, ալ և գետին մօտ զանուող բոլոր փողոցների բնակիչները, Դեսի ձախակողմեան ավեն այն ժամանակ շատ ընդարձակ տարածութեամբ բոլորովին անմարդաբնակ է եղել. Նա իւր ամալութեամբ և եղէգնուաներով միշտ ապահով ապաստանտրան է եղել ամեն տեսակ արկածախնդիր մարդկանց համար, Ջմեռը սառուցների վերալով, իսկ միւս ժամանակները նաւակիչներով նոքա միշտ հեշտութեամբ են կարողացել կատարել իւրեանց չարագործութիւնները գետափում ապրող խաղաղ ջալերի աներում ու ծածուկ մնալ սատիկանութեան հսկողութիւնից. Մի քանի արդպիսի դէպքերից և մանաւանդ մի դէպքից լետով, երբ մի ամրողջ ընտանիք առաւտեան սպանուած են գտել իւրեանց բնակարանում, բոլորի աչքը վախ է ընկել, փախչող փախչողի է եղել և գետափնեալ մասը բոլորովին դատարկուել է բնակիչներից.

Քաղաքի արդպէս լաջող և արագ կերպով շէնանալուն նպաստում է զիխաւորապէս Յովսէփ արքապիսկոպոսը, որ ամեն տեսակ աշխատում է փութով շինել քաղաքը, բնակիչների համար փութով բնակութեան տուն ու տեղ՝ պատրաստել Դորանով նա կարծ միջոցում կարողանում է առնել այն մնձ աղքատութեան առաջը, որի մէջ գտնուում էր ժողովուրդը և որ սպանում էր նորա գոլութեան ապագալում, որովհետև զաղթականներն ապրելու մի անկիւն ունենալով, կամաց-կամաց սկսում են պարապել իւրեանց գործերով և կարողանում են հալթաթել իւրեանց աւուր պարէնը, Վաճառականները սկսում են իւրեանց սովորական առեստուրն անել քաղաքի հրապարակի չորս կողմը շինած խանութիւններում, արհեստաւորներն իւրեանց արհեստները բանեցնելու Ալդ դէպքում զիւղացիք քաղաքցիներից բաղդաւոր են լինում, որովհետև նոքա, իրեներկրագործներ, հէնց զաղթականութեան առաջն տարին սկսում են վար ու ցանք անել և դորանով կարողանում են, գոնէ, իւրեանց ուտելու հացը ձեռք բերել, Փաղաքացւոց դեռպէտք էր ապրանք բերել, լարմարուել տեղական վաճառականութեան և արհեստագործութեան հանգամանքներին, ընտելանալ շրջակալ բնակիչների վարք ու բարքին, լաճախորդներ ձեռք բերել:

իսկ գաղթականներն առաջնում ժամանակները, ճիշդ որ,
մնձ կարօտութեան մէջ են լինում: Նոքա, իրաւ է, իւրեանց
նախկին բնակութեան տեղերում ևս շատ բարեկեցիկ չեն
լինում, որովհետև թաթարների մշտական հալածանքները և
նախանաւանդ Պոխմի թերակղում նոցա ախտեղից դուրս գա-
լուց առաջ մղուած անզերջ պատերազմները, եղած խովու-
թիւնները և անկարգութիւնները բոլորովին աղքատացրել
էին նոցա, անսպէս որ գաղթելու ժամանակ նոքա պարտքի
մէջ են լինում և Ռուսաց տէրութիւնը նոցա պարագի մր-
մասը դանձարանից հատուցանելով է միալն կարողանում խա-
նից իրաւունք ստանալ նոցա գաղթեցնելու, բայց ինչ և ից-
նոքա ախտեղ ունենում են սեփականութիւն՝ տուն տեղ, ար-
գիներ, պարտէղներ և ուրիշ անշարժ կալուածներ, որ նոցա
մի լատնի ապահովութիւն էին տալիս: Գաղթելիս նոքա-
զրկում են և ալդ անշարժ կալուածներից, որովհետև գնող չէ
լինում, ծախուածներն էլ չնչին գներով են ծախում, և զուրտ
են գալիս միալն իւրեանց շարժական ստացուածքն առնելով:
որովհետև Ռուսաց տէրութիւնից կարգադրուած է լինում առ-
նել իւրեանց հետ միալն այն, ինչ որ կարելի էր տանել: Ճիշդ
է, նոցա տեղափոխութիւնը կատարում է արքունի գանձա-
րանից դորա համար նշանակուած գումարով և տէրութեան
կողմից հոգացողութիւն է լինում սիրով ընդունել ու գաղթա-
կաններին և ամեն տեսակ լարմարութիւններ տալու նոցա-
նոր երկրում, բայց ալդ չէ օգնում, որովհետև նոքա
գեա հրովարտակը չստացած դուրս եկած լինելով, ուրեմն և
բնակութեան մի լատնի տեղ չունենալով, ստիպուած են լի-
նում ամբողջ երկու տարի թափառել, որից առաջ է գալիս
այն հանգամանքը, որ նոքա կորցնում են և իւրեանց վերջին
ունեցածը, անսպէս որ երբ նոքա, վերջապէս, հասնում են
իւրեանց բնակութեան տեղը, օրական հացի կարօտ աղքատ-
ներ են լինում: Գաղթականների իւրեանց ալդ սարսափելի
աղքատութիւնից կամաց կամաց դուրս զալուն և ոտքի կանգ-
նելուն նպաստում են՝ նախ, իւրեանց սեփական հակական
աչքաբացութիւնը և աշխատափառութիւնը, երկրորդ, տէրու-
թեան ցոլց տուած օժանդակութիւնը և, երրորդ, Յովսէփ ար-
քեպիսկոպոսի օրինակելի եռանդն ու գործունէութիւնը:

Հալ ժողովուրդն իւր գորութեան սկզբից մինչև վերջը մի-
լաւ որ չէ տեսել. նա իւր թէ անկախութեան և թէ գերու-

թեան ժամանակ միշտ նեղութեան, վշտի և տրտմութեան մէջ
է անցկացրել իւր օրերը, իւր կեանքը, Հալոց թագաւորու-
թեան ժամանակ նա չարչարուել ու տանջուել է ազնուական
դասակարդի ձեռքին, իւր քրտինքի աշխատանքով, վաստա-
կով կերակրելով բազմոթիւ նախարարութիւնը, իսկ օտար-
ների իշխանութեան ժամանակ նեղուել, տառապել է նոցա
ձեռքին իրբ հպատակ, գերի և ստրուկ ժողովուրդ, Պատմու-
թեան ալդ թշուառ հանգամանքները մաշելով հալերի կեան-
քը, բարուապէս ճնշելով, ընկճելով նորան, նուռազեցնելով
նորա թիւը և նիւթականապէս ազքատացնելով նորան, ունե-
ցել են սակալն և մի լաւ կողմ նորա համար, Նոքա նորան
աւորեցրել են համբերող լինել և ամեն տեսակ նեղութիւննե-
րի դիմանալու ընդունակութիւն են տուել նորան, Մշտական
շարքաշ կեանքից նոքա ամրապնդուել են, նոցա մէջ կազմա-
կերպուել է ամեն դժուարութիւնների դէմ մաքառելու ընդու-
նակութիւն, յամառութեամբ իւր զոլութիւնն աշխարհիս երե-
ախն պահպանելու լատկութիւն, որի հետեանքն է անկասկած
և նոցա աչքարացութիւնը և օրինակելի աշխատասիրութիւնը,
Նախիջեանի գաղթականները հալութեան փոքրիկ հատուած-
ներից մէկը լինելով, բոլորովին անմառն չեն եղել ընդհանու-
թի ալդ լաւ լատկութիւններից, Նոքա կարողացել են թաթար-
մոնդուների անասելի բռնութիւններին զիմանալ, և միառածա-
մանակ ապրելով նոցա հիմնած մեծ խանութեան սահմաննե-
րում՝ Հաշտարխանի և Ղազանի մէջ գտնուած Ալխսարաբ
կոչուած տեղում, դեռ ալնքան զօրութիւն են ունեցել, որ
պէնքի զօրութեամբ պատերազմելով նոցա հետ, կարողացել են
լազթանակով զուրս գալ նոցա միջից և բնակութիւն հաստա-
տել Ղոկմի թերակղզում Զանովացւոց իշխանութեան ներքով՝
նոքա ջանովացւոց իշխանութեան տակ գտնուած Ղոկմի ա-
նապատ և անշնչն տեղերը շէնացրել, ծաղկեցրել են և ին-
քեանք այն աստիճանի բարօրութեան են հասել, որ Եւրոպա-
ցի տեղացիների հետ, ըստ ամենալի, հաւասար իրաւոնք-
ներ են վակելի թէ զինուորական թէ քաղաքացիական և թէ
մտաւոր կեանքում, նոքա կարողացել են նեցուկ լինել Զանովակի
խախուտ իշխանութեանն, երբ դէպք է եղել, իւրեանց
սեպհական արինով պաշտպանել են իւրեանց ալդ նոր հալ-
քենքը Թաթարներից ու Համիկներից. նոքա, երբ բոլոր
Ղոկմն ընկել է Թաթարների և Տաճիկների ձեռքը, կարողացել

են պաշտպանել իւրեանց դոլութիւնն անհաւասար պատերազմում և լարգելի են եղել մահմեդական բռնակալների աչքին իսկ երբ սկսել է Ռուսաց քաղաքական լարաբերութիւնը՝ Ղայիմի հետ, նոքա ալնքան քաջութիւն են ունեցել, որ, ահաւոր բռնակալների աչքի առաջ, հոգւով, սրտով անցել են բարեխնամ քրիստոնեալ տէրութեան կողմը և ամեն տեսակ նպաստել են խաչի լաղթանակին լուսնի վերալ. Ահա մի ալդպիսի ժողովուրդ քրիստոնեալ, բարեգութ տէրութեան իշխանութեան ներքոյ անկասկած երկար ժամանակ չպէտք է խարխափէր չքաւորութեան և աղքատութեան ճիրաններում. նապէտք է անշուշտ շուտով դուրս գար իւր խեղճ դրութիւնից, պէտք է մի լաւանի աստիճանի ծաղկած դրութեան հասնէր և շէնցնէր ալին երկիրը, որ շնորհուած էր նորան բնակութեան համար. Տէրութիւնը օժանդակում է ժողովրդին, արքունի գանձարանից հօգալով նորա գաղթականութեան ծախսերը, տաստարի շարունակ ազատ պահելով նորան զանազան պարտականութիւններից և հարկատութիւնից, տաստարի շարունակ աղքատների ամենակարեսը պիտուքը հօգալով և գիւղացիներին սերմացու բաժանելով և անաստուններ տալով ապագալում վերադարձնելու պալմանով և, վերջապէս, ձրիապէս բոլորին շինութիւնների համար քար, փալտ և զանազան նիւթեր մատակարարելով:

Ժողովրդի աղքատութիւնից դուրս գալուն, բացի իւր աչքաբացութիւնից, աշխատասիրութիւնից և տէրութեան ցոլց տուած օժանդակութիւնից, ոչ սակաւ նպաստում է, վերջապէս, և Յովսէփ արքեպիսկոպոսը. Նա չէ խնալում գործ գնելու նորա օգտին իւր հեղինակութիւնը, իրուն բարձր հոգնորական անձն և վիճակաւոր առաջնորդ, իւր սեփական արդիւնքի միջոցները, իւր արքունիքում և կալսերունու մօտ ունեցած աղղեցութիւնը, նշանակութիւնը, իւր անձնական ծանօթութիւնն երկրի կառավարիչների հետ, իւր մտերմութիւնն իշխան Պատեօմկինի և ուրիշ մեծամեծների հետ, իւր սեփական ճիզն ու աշխատութիւնը, իւր մտաւոր և բարուական կարծութիւնները, նորա ձեռքով են պատգամաւորները ստանում արտօնութիւնների հրովարտակը, որով հաստատ բնակութեան տեղ է որոշում գաղթականների համար և վերջ դրւում նոցա կարոտարեր թափառականութեան. նորա միջնորդութեամբ են նոքա ընդունում տէրութեան նշանակած օժանդակու-

Թիւնները, որոնք միջոց են տալիս նոցա հեշտութեան բնակարաններ շինելու, իւրեանց ամենաանհրաժեշտ պիտութները հոգալու, վարուցանք անելու և արդպիսով առաջին ժամանակներն իւրեանց զորոթիւնը պահպանելու. նորա բարեխօսութեամբ են չափուում նոցա շնորհուած հողերը, որոշուում նոցա ասհմանները, որով և առնուում է՝ այն բաղմաթիւ վէճերի, անբաւականութիւնների առաջը, որոնք առաջին նուագ տեղի են ունենուամ զաղթականներին դրացի զինուոր գիւղացիների մէջ հողերի սահմանների անորոշութեան պատճառով. նորա անձնական բարեխօսութեամբ է, որ իշխան Պատեօմիկինը միջնորդում է կալսերունու առաջ աւելացնելու գաղթականներին շնորհած հողերի քանակութիւնը և բաշխելու տաս տարուալ ընթացքում գաղթականների վերալ պատիկի մնացած ահազին գումարը, որով ժաղովուրդը մի կողմից մի նոր հարատութեան ազրիւր է ձևոք բերում, միւս կողմից շատ թեթեանում է պարտքերից նորա անձնական աշխատանքով, շատ անգամ և սեփական արդիւնքով են շինուում եկեղեցիները, վանքը. նորա հսկողութեամբ է կազմակերպուում և գործում Մագիստրատը, հաստատուում Հոգեսոր դատարանը և գրում նորա կանոնադրութիւնը. նորա հեռատեսութեամբ է լինում, որ երջանկալիշատակ Եկատերինէ կալսերունու մահից լեռու նորապասկ Պօղոս կալսրից խկոյն վերահաստատում է արտօնութիւնների հրովարտակը, որով և առնուում է պէս-պէս պատահմունքների առաջը. վերջապէս, նորա աղղեցութեամբ է լինում զիսաւորապէս, որ անխախտ կերպով իրագործուում են հրովարտակի լոգուածները, որովհետեւ տեղական իշխանութիւնը ի նկատի չառնելով Համբերին շնորհած արտօնութիւնները, լաճախակի ալմալիսի պահանջներ էր անում նոցանից, ունապիսի հարկեր ու պարտականութիւններ էր զնում նոցա վերալ, որոնք բոլորովին հակառակ էին նոցա շնորհած կալսերական հրովարտակի և մտքին և բովանդակութեանը.

Նա տեղական իշխանութեան ալդ ապօղինի պահանջները մէկ անգամ ընդ մէշտ կարծենու և բարձրագոյն շնորհած հրովարտակի զօրութիւնը նոցա հասկացնելու համար, 1798 թուին զիմում է բարձրագոյն իշխանութեան և վեց առանձին լոգուածների մէջ ամփոփելով բոլոր մինչեւ ալդ ժամանակ եղած ապօրինի պահանջները, խնդրում է համալել վերջացնել նոցա. Ալդ բողոքը և նորա մէջ իշխուած լոգուածները, որի

առթիւ փոխանակուած գրագրութիւնները մինչեւ ցալսօր դեռ պահպանում են, շատ հետաքրքիր են, որովհետև ցուց են տալիս, նախ, թէ տեղական իշխանութիւնը չիմանալով, չհասկանալով կամ չկամենալով հասկանալ բարձրագոյն իշխանութեան կամքը, ինչպիսի անտեղի և ապօրինի կարգադրութիւններ էր անում Հալերի վերաբերութեամբ և, երկրորդ, թէ Բնչպէս կարող էին տուժել իսեղճ գաղթականները, եթէ չունենալին Ցովսէփ սրբազնի պէս արթուն հովիւ, հզօր տէր և խնամակալ, Ծերակօտը ստանալով առաջնորդի բողոքագիրը և քըննելով նորա մէջ եղած փաստերը ու համեմատելով նոցա գաղթականներին շնորհած արտօնութիւնների հետ, համալում է Նովորոսսիու նահանգական կառավարութեան՝ ա.) Զրաժանել Նախիջնանի հաջ գիւղերը քաղաքի կառավարութիւնից և չենթարկել նոցա Ռաստովի դատարանի իրաւասութեան (Ростовскій հայոց զեմքն ցցէ), ինչպէս որ կարգադրել էր արքունի պալատը, ալլ թողնել նոցա Նախիջնանի հայկական Մագիստրատի կառավարութեան և իրաւասութեան ներքութիւնը ք) Քաղաքից և գիւղերից Ս. Դեմետրի ամրոցի համար եղէջն չպահանջել, շառնել զինուորական հիւանդանոցների համար քողաքացիներից տաս-տաս կոպէկ, գիւղացիներից հինգ-հինգ կոպէկ հարկը, որ նշանակել և առնում էր տեղական իշխանութիւնը, զինուորաներ չընակեցնել Հալերի տներում և չբանեցնել նոցա զօրանոցներ շինելու ժամանակ. գ) Նահանգական կառավարութիւնն իրաւունք չունի պահանջելու և ստիպելու, որ Հալերն իւրեանց պատկանած հողի վերալ փոստի երթենելութիւն հաստատեն և նորա ծախսերը հոգան. դ) Արքունի պալատն իրաւունք չունի Հալերից, բացի հողալին հարկից, որ նոքա հատուցանումեն, և գլխահարկ առնել. ե) Զօրադնդի և թնդանօթների համար Հալերը պարտական չեն տասներեքական կոպէկ հարկ տալու. զ.) Բարձրագոյն հրովարտակով Հալերին շնորհած հողերին ոչ ոք իրաւունք ունի կպչել, թէ որքան որժ և աղքեցութիւն է ունեցել Ցովսէփ արքեպիսկոպոսը, Բնչպէս է լարգելիս եղել նորան բարձրագոյն իշխանութիւնը և թէ որքան մնծ նշանակութիւն է ունեցել նա Նախիեանցոց համար,—ալգ երեսու է նրանից, որ ծերակոլոն իսկոյն բաւականութիւն է տալիս նորա բոլոր պահանջներին, իսկ երբ նորա հեռանալուց լետով, զարձեալ առաջ են գալիս նուն պահանջները և Նախիջնանի հասարակութիւնը իւր Մա-

գիստրատի և քաղաքաղլիսի բերանով նորից բողոքում է բարձրագոյն իշխանութեան, միայն մասամբ բաւականութիւն է տրւում նոցա, ալն էլ զործը բաւականին ժամանակ ձգձգելուց լիտոր նոցա ալդ անզամ արդէն վճռական կերպով հասկացնում են, որ թէն նոցա շնորհած արտօնութիւնների մէջ որոշուած են տրուելիք հարկերը, բայց կան այնպիսի բաներ, որ թէն հրովարտակում չեն լիշուած, ինչպէս, օրինակի համար ճանապարհներ շինելը, կամուրջներ շինելն և պահպանելը, բայց անշուշտ հարկաւոր են և ռասնց նոցա նախիջնանի հասարակութիւնը գոլութիւն ունենալ չէ կարող, ուստի և Հաւերը պարտական են առանց հակածառելու ընդունելու նոցաւ:

Բացի վերոլիշեալ բոլոր միջոցներից, որ Յովսէփ արքեպիսկոպոսը գործ է գնում դաղթականներին նպաստելու դիտաւորութեամբ, նա նոցա զրամական օժանդակութիւն հասցնելու նպատակով դիմում է և մի ուրիշ միջոցի. նա նամակներ է գրում այն ժամանակուալ հարուստ Հալերին, լատնում է նոցա դաղթականների խողճալի դրութիւնը և խնդրում է օգնել նոցա: Սրբազնի ալդ թղթակցութիւններն անհետեանք չեն մնում: Հնդկաստանում ապրող Զուղալեցի Յօհաննշան Գէրաֆեան աղան 1790 թուին մի որոշեալ գումար է լատկացնում Նախիջնանում Ս. Լուսաւորչի անունով մի զպրոց հաստատելու համար. Համադանցի Մառքի Բարաջնեանը 1794 թուականի Մալիսի 31-ին զրած կտակով թողնում է 31 հազար 250 ռուբլու արժէք ունեցող անշարժ կալուածք Նախիջնանում դպրոց, որբանոց, աղքատանոց և անկելանոց պահելու պայմանով. Կեսսարացի Եղիա մահտեսի Յակոբեանը 1799 թուի Մալիսի 9-ին զրած կտակով թողնումէ Նախիջնի դըպրոցներին 3,125 ռ. արձ. (5000 սիալ ռուբի): Կալկաթացի Խօնամալեան ահկինը նորն նպատակով կտակում է 1461 ռուբլի. Սարդիս Մատուրը կտակում է 80 հազար հուն (200 հազար ռուբլի): Նախիջնանի դպրոցներին և տպարանին:

Վերջապէս Հնդկաստանցիք լսելով գաղթականների օգտին նուիրատուութիւններ ժողովելու համար Նախիջնանից Հնդկաստան գնացած քահանաներից մէկի լորդորներին, իւրեանց մէջ ժողովում են շատ աշնդու ապրանք՝ բամբակեալ, բրդեալ և մետաքսեալ թանկագին կտորեղէններ և ուղարկում են Նախիջնան գաղթականների առաջին և ամենաանհրաժեշտ պիտուքը հոգալու համար: Բայց դժբաղդաբար ալդ կտակներից

և նուիրատութիւններից մի քանիսը, ժամանակին նոցա տիրութիւն անող չլինելու պատճառով, ամեննեին չեն ստացւում, ինչպէս Յակովեանինը և Ծատուրինը, մի քանիսն էլ շատուշ են ստացւում, ինչպէս Խօջամալեանինը, Բաբաջանինը և Աշուղու ապրանքը։ Մասնաւորապէս չնդու ապրանքի ուշ ստացուելու պատճառը լինումէ այն հանգամանքը, որ ճանապարհին ալդ ապրանքի արկղները բռնւում են տէրութեան մաքսատանը։ Սկսւում է մի երկար գրագրութիւն Յովսէփ արքեպիսկոպոսի և տէրութեան մէջ, գործի քննութիւնը լանձնուում է մի առանձին լանձնաժողովի և, վերջի վերջու, խընդերը պարզւում է և, սրբազանի կալսեր ներկալացրած խնդրի հիման վերալ, թոլլաւութիւն է ստացւում արկղները, առանց նշանաւկուած մաքսը վճարելու, տէրութեան սահմաններից անցկացնել իրեն բարեգործական նպատակով ուղարկուած իրեղնները Բաց դորանից լսուու էլ դեռ արկղները չուտով չեն հասնուում Նախիջեան, որովհետեւ, նախ ալդ ժամանակ գաղթականները արդէն շատ էլ կարօտութիւն չեն ունենուում ալդ ապրանքին, երկրորդ, ինքը Յովսէփ սրբազանն էլ զբաղուած լինելով Գրիգորուալովի հիմարկութեան գործով, միջոց չէ ունենուում ապրանքը վճարելու և փողը Նախիջեանցւոց հասցնելու Արկղները մնում են Գրիգորուալուում լանձնաժողովի հսկողութեան ներքու մինչև Ռուսաստանի Հալոց երկրորդ առաջնորդ Նիկոլայ Առամանով, վերջապէս, արկղները տարւում են Ղափ և ապրանքը ի վճարու է հանւում։ Սական լանձնաժողովի գնահատութեամբ նշանակուած գների թանգութեան պատճառով անհնարին է լինում ծախել նոցա Ղոփմում, ուստի և առաջնորդը ստիպուած է լինում 1809 թուի Մարտի 22-ին զրած առանձին թղթով լանձնել նոցա Նախիջեանցւոց, հրամակելով վճարել նոցա և գոլացած փողը, որ գնահատութեան հաշուով պէտք է անէր 16 հազար 8 հարիւր 28 ոռուրի և գնել քաղաքի արկղը շահաւէտ գործածութեան համար։ Բաց, ինչպէս դործից երևում է, նախ, լանձնաժողովը բոլոր ապրանքը ալդ ժամանակ չէ լանձնուում Նախիջեանցւոց, ալլ միակն մի մասը, երկրորդ, արկղները լանձնաժողովի հըսկողութեան ներքու դրաւելուց առաջ էլ բացուած են լինում և ապրանքի մի մասն էլ Բեսսարաբիու Գրիգոր վարդապետի ձեռքով վաճառուած է լինում։ Ալդ իսկ պատճառով Նիկոլայ սրբազանը դիմում է տէրութեան և խնդրում է, որ հրաման

լինի լանձնաժողովին լանձնել իրան ապրանքի մացեալ 900 կտորը և դորա հետ միասին և այն Զ5 հաղար ռուբլին, որ տէրութիւնը տուել էր 8օվսէփ սրբազնին Գրիգորուպօլում Հալոց եկեղեցի և վանք շինելու համար, բայց ալդ նպատակի համար չէր գործադրուել Սրբազնի ալդ խնդրի պատասխանը ստացւում է 1809 թուի սեպտեմբերի 31-ին, երր արդէն նա ընտրուած լինելով կաթուղիկոս, պատրաստուում է ճանապարհ ընկնել Պետերբուրգից և Նախիջևանի վերալով գնալ Ս. Եջմիածին։ Ալդ պատճառով էլ նա բոլոր գործը լանձնում է Գրիգորուպօլի լաջորդ Մանուէլ վարդապետին, տեղեկացնում է ալդ մասին Քերսոնի և Տաւրիկեան նահանգների զինուորական նահանգապետ իմմանուէլ Օսիպովից Դիւկ-դէ-Ռիշլեօլին և ինքը ստանալով իւր հաստատութեան «Ղրամատը», ճանապարհ է դուրս գալիս։ Թի 11 նոյեմբերի, գրում է նա ալդ մասին Պետերբուրգից Նախիջևանցոց, զրեալ եմք բարեկարգ Մաղիստրոթիգ՝ եթէ վասն հնոու ապրանաց զինչ ունի վճռեալ ինոստրաննի կալէգն։ Թէպէտ և ի նմին խոստացեալ էաք զնորին վճուց օրինակն հանդերձ հալերէն թարգմանութեամբ չգել, ի զանազան դրազանս գոլով՝ հազիւ թէ ալժմ ձեռնհաս եղաք լցել զնոսին ի սմին։ Եւ մեք ևս ահա զլխովին ի վերալ ճանապարհորդութեան գոլով, և հանդերձելով լաւ քանի աւուրս ելանել աստի, առաքեմք զՄանուել վարդապետն ի Գրիգորեպօլ, և պաֆառ դուքին ևս ունիմք գրել զթուղթ վասն իրացս, և ի ստանալն մեր ի նմանէ զպատասխանին, տեսնեալ թէ զբնչ պարտէ մեղ գրել, և ձեղ առնել, զինոց եմք։ Տէրութիւնը երջանկալիշատակ վեհափառի պահանջն իրաւացի համարելով, որոշել էր վաճառուած ապրանքի պատասխանատութիւնը ձգել Գրիգոր եպիսկոպոսի վերալ, իրաւունք էր տուել դատարանով պահանջել Յովսէփ սրբազնի ժամանքներից 25 հազար ռուբլին և մացեալ ապրանքը հրամակել էր լանձնել կամ վեհափառին, կամ Գրիգորուպօլի վերակացուներին և կամ Նախիջևանցոց։ Մանուէլ վարդապետը կաթուղիկոսին Նախիջևանից ճանապարհ ձգելուց լետով, գընում է իւր լաջորդութեան տեղը և ձեռնարկում է կաթուղիկոսի լանձնարարութիւնը և «ինոստրաննի կալէգից» ստացուած որոշումը ի կատար ածելու բայց տեսնելով, որ գործը շատ խճուած է և դատավարութիւնը մեծ աշխատանք է պահանջում, հրաժարուում է ալդ գործից, պատճառ բերելով թէ

անվալել է հոգեորականներին «ալդպիսի մանրաքնին դատաստանք և հաշուապահանջութիւնք», «Որ ինչ հարկաւորքն էին զիտելիք առ ձեզ վասն հաշուապահանջութեան և հնտու ապրանաց, դրում է նա ալդ մասին 1810թուի հունուարի 2-ին Նախիջնանցոց, զայն ամենալն սրբազնակատար վեհապետ տէրս մեր՝ հանդերձ կորեալիք լիովին ծանուցեալ է լարգութեան ձերում, մրայն մնալ ինձ լաւտնել աստանօր զապառնի հողացողութիւն, ըստ որում ինսաստրանի կօլէկն առաջարկեալ է պայծառ դիւքին, մացեալ պահանջութիւն ի Գրիգոր վարդապետէ և ի քնեազ Արդութեանցն ֆօրմի սուտով հարցանել՝ և զկալս նոցին պօդ արեզդ առնել, Արդ լալտ է գերապատութեան ձերում, թէ ալդպիսի մանրաքնին դատաստանք և հաշուապահանջութիւնք ոչ վայել են մեղ հոգեորականացն՝ ուստի ես ինքու հաստատապէս՝ զհրաժարիւն իմ լալդմանէ առաջարկեալ եմ՝ սրբազնակատար վեհապետ տեառնս՝ որ ի սկզբանն թէ նորին սրբազնութենէ և թէ ի Գրիստոս հանգուցեալ Աղալ Մինասի հրամանօքն՝ ճեռնամուխ եղեալ էի, որոց մինն վախճանեալ՝ և միւսն հեռացեալ գնալ՝ և գործդ ալդ մնձի զբաղանաց պէտու ունի. նմին իրի լաւտնեմ և գերապատութեան ձեր՝ որ ըստ բարուք տնօրէնութեան ձերոյ՝ զով ոք կամիք լատկացուածիք լինել հետեւող գործուղ ալդմիկ՝ և որ ինչ հարկաւոր գրութիւնք կան առ իս՝ ի գրելն ձեր մեզ՝ ունձնել լանձնել նմա»¹⁷⁾:

17) Թէ ախուհետե Բնչ վախճան է ունենում ալդ գործը, —մեզ լաւտնի չէ, որովհետև մեր ձեռքում գտնուած գրազրութիւնը ալդ մասին միանդաման լրութիւն են պահպանում. Եւ առասարակ «Հնդու ապրանքի» հանգամանքները շատ մութիւն են. լաւտնի չէ, թէ ի սկզբանէ ընդամենը ողքան ապրանք է եղել, Բնչու համար լանձնածողովը ապրանքի մի մասը չէ լանձնել Նախիջնանցոց, ծախել են արդեօք Նախիջնանցիք իւրեանց ստացած ապրանքի մասը, որքան փող է գոլացել և Բնչի վերալ է ծախսուել ալդ փողը, Նախիջնանի քաղաքագլուխը և դատաւորները արդեօք ընդունել են Մանուէլ վարդապետի առաջարկութիւնը, թէ ոչ և ալլն. Աւելորդ չենք համարում զնել ալստեղ «ինսաստրաննի կօլէգից ստացած թղթի պատճէնը, որ մասսամբ պարզաբանում է ալդ ինդիրը. «Սղեալն ի վերալ ընակելոց ի ոռոսաստան հալոց Արք եպիսկոպոսն Եփրեմ, որ ալմէ բարձրագոյն հրամանաւ հաստատեալ է լարգանաւորութիւն պատրիարքութեան Եջմիածնի լալտարարութեամբն իւրով առ թագաւորական ինսատրանի

Ահա ալս երեք նպաստեցուցիչ հանդամանքների շնորհիւն իւրեանց աշխարացութեամբ և ջանասիրութեամբ, տէրութեանցուց տուած օգնութեամբ և Յովսէփի արքեպիսկոպոսի գործակցութեամբ գաղթականները վերջ ի վերջու կարողանում են վերացնել իւրեանց առաջ եղած արգելքները և յաղթող հանդիսանալ իւրեանց շրջապատող բոլոր աննպաստ հանդամանքների վերաբ. Համեմատաբար կարճ միջոցում ալնպէս շինուում ու ընդարձակւում է քաղաքը, անպէս չէնանում ու բարեկարգում են գիւղերը, որ նոքա ամեն բանով թէ շինութիւնների ընդարձակութեամբ ու զեղեցկութեամբ և թէ դաշտերի լաւ մշակութեամբ սկսում են զանազանուել բոլոր շրջակալքում

գործոց կալէկն 19 անցեալ Օգոստոսի առաջարկեաց զի հաստատեալն ըստ բարձրագուն նորին կալսերական Մեծութեան հրամանի ի քաղաքն Գրիգորիապոլ գօմիսան վասն վերահասութեան հալոց պահանջողութեան համարելով զառաքեալն առ հանգուցեալ Յովսէփի պատրիարքն ի Հնդկաստանի հալոց հասարակութեան վասն օգտակար առաջարկութեանց յաղագս նոցին մի ահաւատ բնակելոցն ի Ռուսաստան ապրանքն և փողն իրբն անձնական կաթը նոյն պատրիարքին ոչ տալ զմնացեալ ապրանքն 900 կտորն, ոչ նմա պատրիարքին Եփրեմի, և ոչ վերակացուաց Գրիգոր ու պալու և Նախիջեանու հալոց վասն նախանշանակեալ գործառնութեանց առաջարկելով յապացուցութիւն զ25 հազար սուպին որք շնորհեցեալ են ի հանգուցեալ կալսերէ վասն կառուցանելու ի Գրիգորիապոլ զԱւագ եկեղեցի, և զվանք, և որք իրը թէ լիշեալ պատրիարքաւ Յովսէփաւ գործածեցուցեալ են լիւր պիտանաւորութեան, որ արք եսպակուպոն, Գրիգոր վասն պակասեալ նոյն ապրանաց լորքանութենէն, նմանապէս և առ ձեռն բերեալ ի վաճառեալ ապրանաց լորամց մինչև ցալմմ ոչ տալ զհաշիւն հեռացուցանելով զինքն էանմանէ զանազան կերպիւ, և ինչը նախ զի մնացեալ ի նոյն ապրանաց 900 կտորն տրեցեալ լիւթին ինքեան պատրիարքին կամ վերակացուացն Գրիգորիապոլու և Նախիջեանի հալոց հազար նախանշանակեալ գործոց, երկրորդ զի արք եպիսկոպոսն Գրիգոր վասն պակասւալ քանակութեան նոյն ապրանաց նմանապէս և վասն ի ձեռս բերեալ ծախեալ ապրանաց փողին պատկանեալ ծշարիտ հաշիւն, և երրորդ զի ի լիշեալ ժառանգաց պատրիարքին քնեաղ Արդութեանց երկանքաբազուկի կամ ի նոյն արք եպիսկոպոս Գրիգորէ պահանջեալ լիցի 25 հազար սուպին, որ շնորհեցեալ էր վասն կառուցմանց եկեղեցւու և վանքի օրինաւոր տոկոսիւքն լորէ լինելութեան վասն արևմ բարձրագուն ու քաղին և նախ քան զալն ժամանակն արգելումն դնել ի վերակալից նոյն ժառանգաց հանգուցեալ պատրիարքին կամ ը վե-

և դաճներից, Նախիջևանը իւր գիտերով կարճ միջոցում դառնում է մի օվալիս լախատարած և անչէն անապատի մէջ։ Հայ գիւղացիք շուտով ձեռք են բերում լուրջ, զործ հասկացող և հմուտ երկրագործների հաջակ։ նոցա արդիւնաբերած ցորենը և միւս հացաբուերը՝ անուն են ստանում և աւելի թանգ են զնահաւուում, քան թէ բոլոր շրջակաւքինը։ Հայ քաղաքացիք հմուտ և ճարպիկ վաճառականներ են դառնում։ Նոքա մի կողմից առետրական լարաբերութիւն են կապում հարաւալին Ռուսաստանի վաճառաշահ կենդրունների հետ, միւս

րալ անձնական կալից լիշևալ արք եպիսկոպոսի Գրիգորի եթէ նորին զտան իցի և ճանաչիցի առ այն բաւականին։ Բայց որպէս կալէկի արարեալ վերահսութեամբն երկի նա զի վասն ի ներս թողելու լիշեալ ապրանաց ըստ ծանուցման սոլն կալէկի տրեցեալ եղեւ բարձրագործն հրովարտակ անուն վաճառականաց կալէկին առաջին կառավարիչ սումանովին ի 30 առուր մարտի 1799 թուին, լորում զրեալ է, «Լստ խնդրու արք եպիսկոպոսին հալոց Յովսէփի Ամենաողորմածաբար հրամակեմք զի ապրանքն առաքեցեալ ի հսդու տեղուն հալոց հասարակութենէ վասն վաճառեցման լոգուտ զանազան Աստուածահանու գործառնութեանց լազագս նոցին մի երկրացի հասարակութեանց ի ռուսաստան եղելոցն որ ընդ արմ եղեալ թէքթէրով թողեալ լիցին ի դամմաժնալէն առանց առնելով մաքս նւ երկրորդ զի վասն գումարի շնորհեցեալ լազագս կառուցման ի Գրիգորիակոլ Աւագ եկեղեցւու և վանքի տուեալ էր բարձրագործն ութաղ ստորագրութեամբ նորին Կալսերական Մեծութեան իսկական ձեռամբն առ դաշնի սավէթնիկ և թագաւորական կազնաչէլ պարոն Վասիլուն ի 23 առուր նոյեմբերի 1797 թուին, լորում կերպաւորեալ է, «Համեմատ պահանջողութեան հալոց Գրիգոր վարդապետի, հրամակեմք վասն շնութեան ի Գրիգորիակոլ հալոց Աւագ եկեղեցւու և վանքի, թողու 25 հազար ըռուպի, վերահսութեան նոյն վարդապետին, ըստ որում նա սոլն դրամով կապակցի բոլոր զայն շնութիւն կատարել», որ ի սոլնապիսեաց երեկի զի ապրանքն և դրամքն առաքեցեալք առ հանգուցեալ պատրիարքն Յովսէփի ի Հնդու բնակչաց անդանօր հալոց վասն զանազան օգտաւէտ գործածութեանց լոգուտ միահաւատից իւրեանց ի ռուսիու եղելոցն պատկանին ի գործածութիւն նախանշանակեցեալ պիտանաւորութեանց, որ և պարտ է լինել միջնորդութեամբ նոցին գլխաւոր հովուապետի կամ վերակացուաց Գրիգորիակոլու և Նախիջևանու հալոց, և որ վասն այն պատճառի չէ պարտ լախցանէ ի բաց առնուլ զշէ հազար ռուպին շնորհեցեալն վասն կառուցման եկեղեցւու և վանքի, և որ վասն խարճելուն զնոյն 25 հազար ռուպին պարտ են պա-

կողմից սկսում են երթևեկել Կաստանդնուպօլիս, Անատօլիա-
և Սիբիրիա: Նոքա են լինում հարավին Ռուսաստանի տօ-
նավաճառների ամենալաւ լաճախորդները, նոքա են լինում
բրդի, մորթու և կաշուի ամենամեծ գնողները և վաճառողնե-
րը, նոքա են լինում Սիբիրիու իւղի բնրողները, Պոլսի տաճ-
կական ապրանքների և արենելեան վաճառքների Դօնի և Ա-
զովի ծովի կողմնում տարածողները և, վերջապէս, նոքա են
լինում առաջինը, որ առենտրական լարսքերութիւն են սկսում
Եւրոպալի հետ, ցորեն վաճառելու կենցրունական գրասենեակ-
ներ են հաստատում Տագանրոգում: Եւ պէտք է նկատել, որ
այդ դէպքում Հայերը լինում են ոչ միայն հասարակ վաճա-

տասխանատու լինել կամ հանգուցեալ Յովոչի պատրիարքն.
կամ Գրիգոր արքեպիսկոպոսն Գրիգորիապօլու հասարակու-
թեան ի լօգուտ որով շնորհեցեալ էր նոյն գումարն: Եւ վասն
միւս գումարից որ ձեռնարկեալ էր ի վաճառել լիշեալ ապ-
րանացն, նոյնպէս և վասն պակասորդ ապրանաց պարտ է
չառուկ պատասխանատու լինել հասարակութեան նոյն արք-
եպիսկոպոսն, որով աղջառ ինսուստրանի գործոց կալէն ծանու-
ցանելով վասն ամենալի ալսոցիկ մանրա մասնութեանց ձեռու-
պալծառութեան լանձնէ տեղւորդ ձերու վերատեսչութեան եթէ
դատելոց էք պատշաճ վասն վերջացուցանելու սոյն գործոց
հրամանի առ որ պատկանի: Նախ լիշեալ շնոր ապրանքն
900 կտորն տալ Արքեպիսկոպոսին, որ ալժմէ պատրիարք Եփ-
րեմ, կամ վերակացուացն Գրիգորուպօլու և Նախիջնաու հա-
լոց լորոց առնելով զձեռագիր: Ալլ լաղազս 25 հազար ռուպ-
լոց շնորհեցեալ վասն կառուցման եկեղեցւոյ և վանքի, և միւս
գումարաց վաճառեալ սպրանաց պարտ է պատասխանատու
լինել նոյն Գրիգորն, կամ ժառանգքն լիշեալ պատրիարքին
քննեազ Արդութեանց Դոլցօրուկովին, վասնորու և թողուլ նո-
ցա հետեւ Փօրմի սուլով ուր օրինուք պատկանի: Եւ վասն
տնկասկածութեան ալսպիսի պահանջողութեան դնել արեստ
(ալսինքն ո բգելումն) ի վերալ կալից որպէս ժառանգաց պատ-
րիարքին քննեազ Արդութեանց Դոլցօրուկովին, նոյնպէս և
արքեպիսկոպոսին Գրիգորին:

Գրիգորուպօլիկ լաջորդ Մանուէլը ակն Մանուէլ վարդա-
պետն է, որ Ռուսաստանի հալոց երրորդ առաջնորդ Յովհան-
նէս Գառնակերեանի օրերով ևրկար ժամանակ վարել է Ղումի
և Ս. Խաչ: Վանքի վանահայրութեան պաշտօնը և լաւանի մեր
մէջ «Գիւմուշխանցի» մականունով: Գիւմուշխանցուց մեր ձեռ-
քը հասել է մի ձեռագիր տաճկաբարբառու: և հալտառ «վեց-
հազարեակ» որ ւնի հետեւալ հետաքրքիր իշատակարանը
Կիւմուշխանցի Մանուէլ վարդապետ ի Ղրիմու սուրբ վանքի:

ռականներ, միջնորդներ գնողի և արդիւնաբերողի մէջ, ալ և լաճախակի նոքա հանդիսանում են և իբրև արդիւնաբերողներ. Հայերն են առաջին անգամ սկսում Դօնի շրջանում եղած ածխանաքերը մշակել, նոքա են առաջին անդամ կաշուի գործարաններ բաց անում, Կովկասեան և արևելեան ձեի ու ճաշակի արծաթեղէն արհեստագործում, ցորենի շտեմարաններ հիմում, ճարպի գործարաններ հաստատում, մնձ քանակութեամբ բուրդ, կաշի և մօրթի արտասահման արտահանում¹⁸⁾, Նախիջնանն ալդպիսի հանգամանքներում

հաղորդ ետ մահման նորա ես Մարգար Մաղաքովս Նախիջեվանցի նորա վոքրաւորը ըլալովս ինձ մնաց ալս է տասնըշորս տարվան աշխատանցս տէրս լուսաւորէ հոգին ամէնուն վեց հազարեաք կասեն ես չէմ հասկընար»

¹⁸⁾ Թէև գողականների նիւթական միջոցները շատ սուղ են լինում, ասում է Սկրաիչ Մոռոզովը, խօսելով Նուխիջնանցւոց առևտրական գործունէութեան մասին, բայց և անպէս քաղաքի շինութիւնը արագ կերպով առաջ է գնում։ Համամատարար դանդաղ է առաջ ընթանում հայերի առևտրական գործունէութիւնը, որովհետեւ նոքա դեռ տեղական լեզուին ու կարգ ու կանոնին ընտելացած չլինելով, ստիպուած են լինում չարունակել իւրեանց նախկին առևտուրը կոստանդնուպոլիսի և Անտառիափի հետ, երթևեկելով ալն կողմնը փոքր և խախուտ նաւերով և նաւալվարութեան գործին անհմտու մարդկանց ղեկավարութեամբ և լաճախակի կորցնելով իւրեանց ստացուածքը, մինչև անգամ մահ են գտնելով անհիւրնկալ Աղովի և Սև ծովի ալիքների մէջ. Բացի լեզուին և տեղական հանդամանքներին անձանօթ լինելը, հայերի առևտրական գործունէութիւնը ոչ սակաւ դանդաղեցնում է և 1795 թուականը, որ սովորաբար կոչուում է «Օչակովի տարի» Աւտ թուականի ձիւնաշատ, բքաբեր և մրրկալից ձմեռը բազմաթիւ խաչինք և արջառ կոտորելով, մեծ հարուած է տալիս հայ վաճառականներին, Բայց նոքա կամաց կամաց ընտելանալով հանգամանքներին, իւրեանց առևտրական գործին տեղական բնաւորութիւն են տալիս և դորանով կարողանում են առաջ գնալու Նոքա առևտրական լարաբերութիւն են սկսում Մոսկուակի հետ և ծանօթանում են ձեռագործ ապրանքների արդիւնաբերութեան պալմաններին. Նոքա սկսում են լաճախել նշանաւոր Մակարիալի տօնավաճառը և ալդ տեղից մեծ քանակութեամբ ապրանք տեղափոխելով Սև ծովի և Պուրանի շրջանները, առևտրական լարաբերութիւն են կապում լեռնորդիների հետ, նոքա Մակարիալի պատրաստի ապրանքը տարածելով զանազան տեղեր, փոխարէնը ժողովում են տեղական արդիւնաբերութեան հում նիւթերը և տանում վաճառում են նոցա Ռուսաստանի

դառնում է մի առևտրական շուկայ, մի արդիւնաբերութեան կենդրոն, որ իւր մշտական եռանդուն գործունէութեամբ կենդանութիւն է տալիս բոլոր շրջակալքին և կեանքի, շարժման և աշխատանքի ազբիւր է լինում բոլորի համար. Անապատը սկսում է չէնանալ, երկիրը ծաղկել և առաջ դնալ...

ԵՐ. ՇԱՀԱԶԻՋ

(Վերջը միւս անգամ)

Թօնավաճառներում, Ցագանրողը իւրեանց համար արտասահմանեան առևտրի կենդրոն ընտրելով, հայերը ուղարկում են Տաճկաստան հացահատիկ, իւղ, երկաթ, ճարպ և բուրդ, Եւրոպակի հետ առաջին անգամ առևտուր սկսողները լինում են Նախիջնանցի Խաթրանեան և Օդարաշեան վաճառականները, իսկ առաջին անգամ Ցագանրողում Եւրոպական ձեռվ առետրական տան հաստատողը լինում է Նախիջնանցի Մկրտիչ Պոպովը. Ցագանրոցը, որ մինչև հայերի Դօնի ափը գալը մի անլաւտ քաղաք էր, նոցա շնորհիւ դառնում է Ազովի ծովի վերալ գտնուած նաւահանդիսաներից ամենաբանուկը՝ Մկրտիչ Սորոզովի մասին տես մեր «Նոր-Նորիջնանի Ս. Խաչ վանքը»՝ էջ 13, 7 ձանօթութիւն.